



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

«МОЛОДОЙ РАБОЧИЙ» - ԽՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ԼԿԱՆԻ ԱՆԴԵՐԵՐԿՈՒՄԻ ՈՐԴՅԱՆ

ՀԱՄԱՐԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ  
ԱՐԴԱՎ ՄՈՒՏԱԿՈՏԵՐԻ ԴԵՍ

Ա. ԿԱՄԱՐԻՆՈՎԻ

Վ Ո Զ Ն Զ Ա Ց Ն Ե Ն Ք  
ԿԱՆԱՉ Վ Ն Ա Վ Ա Տ Ո Ւ Ն Ե Ր Ի Ն


ԲԱՐԳՄ. ՅԵՎ. ԽՄԱԳՐ. Զ. Ա.ԱԶՎ.Ա.ԺՎԱ.ՏՐԵՎՈ.Հ.

---

ԳՅՈՒՂՂՐԱՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ



„МОЛОДОИ РАБОЧИИ“-Ի ԽՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
Լազար Անդրեասի լուսն

ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՂԵՐԻՏԱԿԱՆ  
ԱՐՏԱՎ ՄՈՒԱԽՏԵՐԻ ԴԵՐ

Ա. ԿՈՄՄԻՏԱՑԻ

Վ Ս Տ Ա Տ Ա Տ Ե Ն Ք  
ԿԱՆԱԶ Վ Ա Ս Ա Վ Տ Ո Ւ Ն Ե Ր Ի Ն

ԲԱՐՁՐ. ՅԵԼ ԽՐԱԳ. Զ. Ա. ԽԵՎԱ. ԽԵՎԱ. ԽԵՎԱ.

19030  
11  
Ա 24344



Անգլ. իմբարժեր՝ Վ. Բարսյան

Սըբագրիչնեց՝ Խ. Այվազյան և Ս. Փանոսյան

Հանձնված և արտադրության 1934 թ. գիտըզմարի 23-ին, ստորագրված և  
ապադրելու 1934 թ. մարտի 6-ին, գլավվահ 141, տիրած 3000, պատ. № 163.

ԳՅՈՒՂԱՐՄԱՆ ՏՎԱՐԱՆ, ԵԵՐԵՎԱՆ, ՆԱՇԻԱՆԴԱՆ և 50

## Ա Ր Ա Ջ Բ Ա Կ

Յերկրորդ հնգամյակի շնմքում կոմյերիտիության նախաձևնությամբ մալախոտերի դեմ սկսված համամիութենական արշավը ժամացում են

«Արշավ մոլախոտերի դեմ» լողունզը դահուում և կուլառության յերկրագործության գործոն, հեղափոխական տղրութենիկայի համար մղջող պայքարի դրոշ:

Գյուղական տեսության մեջ բերքի բարձրացումը հանդիսանում և յերկրորդ հնգամյակի կենտրոնական խնդիրը, վարի իրադրության համար որորի վրա աճում և հակամոլախոտային արշավը նշանակությունը, վորպես մասսայական պայքարի մի մկուն ձև:


Մեր դաշտերի աղբուության դեմ տարվող արշավին չծվում են հողային, գիտական և այլ կազմակերպությունները:

Գյուղատնտեսական տիեխնիկայի տիբապետման խնդիրն այժմ ավելի քան յերեւն հանդիսանում և զցուղական յերիտասարդության, հատկապես կոմյերիտական ակտիվի, բարձր բերքի դիտակալների ու ազրոտեխնիկական խմբակների համար, որվութենահրատապ խնդիրը:

Զնայած գրան, հակամոլախոտային արշավի նշանակությանը նվիրած հանրամատչելի, մասսայական դրականությունը մեզ մոտ միանգամայն բացակայում և Տեղերում այդ արշավի նշանակությունը հաճախ շատ նեղ և սխալ և հասկացվում:

«Մոլորոյ Բարոչիյ» թիրթի խմբագրությունը՝ հրատարակելով այս գրքույկը, նպատակ և ունեցել ոգնել կոմյերիտմիությանը, ցույց տալ, վոր մոլախոտերի դեմ տարվող արշավն ընդարձակ կուլտուր-քաղաքական խնդիր և, կապված ազրուկանունների ամբողջ նպատակի կիրառման հետ:

Առանձին մոլախոտեր նկարագրելիս՝ ստիպված ենք յեղել տալ մի շարք տեղական անուններ՝ հայերեն, թուրքերեն ու վրացերեն լեզուներով: Բայց վորովհետև այդ անունները լրիվ չեն և շատ մոլախոտեր ամեն մի շրջանում համարյա առանձին անուն են կրում, ուստի, վորպիսդի ազրոտեխնմբակների ղեկավարներին ողնած լինենք, ստիպված ենք յեղել տեղական անուններից բացի, տալ նաև գիտական, բուսաբանական անուններ (լատիներեն լեզվով):



## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մոլախոտերը (կանաչ վնասատուները) մեր դաշտերի ամենասույշը թշնամիններն են: Նրանց պատճառով մենք ամեն տարի հսկայական վնասներ ենք կրում: Հենց այս տարի հայաստանի շատ շրջաններում (Համամլու, Ն. Բայազեն, Ախտա և այլն) մոլախոտերի, հատկապես խրփուկի ուժեղ տարածված լինելու հետեւանքով, սովորված յեղանք բավականին տարածություններով հացարույսեր հնձել վորպես խոռ:

Այս յերևույթը խոռում և այն մասին, վոր մոլախոտերը դեռ իշխում են մեր դաշտերում և վոր մենք դեռևս չենք կարողացել նրանց վոչնչացներ նոկ մոլախոտերի վոչնչացումը ընթառատվության բարձրացման կարենրատույն պայմաններից մենքն են:

Այս ասպարիզում հսկայական դեր ունի կատարելու կոմյերիտիությունը, հատկապես նրա զուրուղական բջիջները:

Ի նկատի ունենալով այդ, անցյալ տարի մոլախոտերի գեմ համամիութենական արշավ հայտարարվեց, վորը, սակայն մեղ մոտ համարյա իր արձագանքները չովկեց: Անհրաժեշտ և, գոնե այս տարվանից, այդ աշխատանքներն ուժեղ թափով ծագվել:

Սակայն մեղ մոտ, շատ տեղերում չգիտեն թե ինչնեմն և կայանում այդ արշավի եյությունը, ինչից պետք և սկսել աշխատանքները և ինչպես տուաջ տառներ:

Այս անսակետից կամարինակու այս գըցույկի հայերեն հրատարակությունը խոչըր ոգնություն կարող և հասցնել շրջանային մեր աշխատողներին, հատկապես կոմյերիտական բջիջներին: Գըցքույկում մանրամասն կերպով պարզաբանված են արշավին վերաբերող բոլոր խնդիրները, բացի այդ, տրված և նաև մի շաբաթ կարենը տարածված մոլախոտերի նկարագրությունն ու նրանց դեմ պայքարելու միջոցները:

Թարգմանությունը կատարված և վոչ մեծ փոփոխություններով: Կան տեղեր, վորուել վորոշ մասեր կը ճատելն անհրաժեշտ ենք համարել, ինչպես նաև կատարված են վորոշ հավելումներ: Առանձին մոլախոտերի ուսումնասիրության զիմում մենք կատարել ենք վորոշ հավելումներ այն մոլախոտերի նկարագրությունն ու նրանց հայտառանում շատ տարածված են և մեծ վնաս են հասցնում:

Տրված և նաև՝ թե այդ մոլախոտերը Հայաստանի վոր շրջաններում են տարածված և այլն:

Դրքույկի մեջ նկարագրված են մի շարք մոլախոտեր, վորոնք Հայաստանում բոլորովին չկան և կամ շատ քիչ են ու առանձին վեստներ չեն հասցնում, սակայն մենք դրանք թողել ենք, նկատի ունենալով, վոր այս դրքույկը, բացի Հայաստանից, սպասարկելու յև նաև Անդրկովկասի այլ հանրապետությունների հայկական շրջաններին ու զյուղերին, իսկ այդ շրջաններում այդ մոլախոտերն ունեն խոշոր նշանակություն:

Նույն այդ նկատառումով ել զրքի մեջ, բացի հայերեն անուններից, թողնված են նաև թուրքերեն ու վրացերեն անունները: Դրքույկը բազմաթիվ անուններով չծանրաբեռնելու նպատակով, մենք հանել ենք մի շարք այլ լեզուներով (ուսերեն, մինչդրելերեն, սվանեթերեն և այլն) տրված անունները:

Թ. Ա. Ր Գ. Մ Ա. Ն Ի Զ

## ԱՐԴԱՎԻ ՅԵԼՆԵՆՔ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒ- ԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԽՍՀՄ Հռոմանկան ընկե. Յա. Ա. Շահրդիլիսի նամակը՝ ուղղված «Հռոմանության Պատմագրացին կից կազմուին բարձրագույն հակառակային արօնուի օսարքին»

Մոլախոտերի դեմ սկսելով արշավը՝ կոմյերի ամիսությունն իր վրա յե վերցրել մի մեծ գործի նախաձեռնությունն Անցյալ տարի Հյուսիսային Կովկասում, Ռւկրայնայում, Ստորին Վոլգայում և մի շարք այլ զրջաններում մոլախոտերը կերան մեր բերքի բավականին զգալի մասը։ Մոլախոտերը ճնում են մարդիկ իրենց փնթի աշխատանքով, անշնորթությամբ՝ արգրումիական անոգրադիտությամբ։

Պայքարել մոլախոտերի դեմ, նշանակում և բարեխիղն կերպով հողը վարել այն խորությամբ, ինչ խորությամբ այդ պահանջում ե ապրոտիխնիկան, ցանել սահմանված նորմաներով, լրիվ կատարել ցեղերի ծրագիրը և ցեղադաշտերը մշակել 2—3 անգամից վոչ պակաս, մշակել միջարքերը, սակայն վոչ ի միջի այլոց, այլ այնպես, վոր վոչնչացվի յուրաքանչյուր մոլախոտ։ Մի խոսքով, արշավ սկսելով մոլախոտերի դեմ, կոմյերիս միությունն արշավ և սկսել կուլատուրական յերկրագործության համար։

Ազգոնոմների, գիտահետազոտական ինստիտուտների, փորձնական հիմնարկների պարտականությունն և այդ գործում ոգնել կոմյերի տմիությանը, լծվել այդ արշավին։

Համոզված եմ, վոր կոմյերի ամիսության կողմից սկսված արշավն իսկական ազրոնոմիական կուլտուրան կոլտնտեսություններում արմատավորող հարյուր հազարավոր մարտիկներ կլոփի։

ՅԱ. ՅԱ. ԿՈՎԵԼԵՎ

## ՀԱԿԱՄՈՒԱԽՈՏԱՅԻՆ ԱՐԴԱՎԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐ

«Կոմսոմոլսկայա Պրավդա»-ն կոչ և անում ամբողջ Միության յերիտասարդությանը պայքարի դուրս գալ մոլախոտերի դեմ։ Դա շատ լուրջ գործ ե, և սկսելով այդ գործը, կոմյերի ամիսությունը մեկ անգամ ևս համոզեցուցիչ կերպով խոսում ե իր

կուլտուրական աճսան, իր քաղաքական հասունության մասին: Մի յերկրում, վորտեղ հայտարարված և և հաջողությամբ զարգացնում և անխնա պայքարը—«վոչնչացման պայքարը»— պրովետարիատի նոր աշխարհ կառուցողի, յերկու վունանի գիշտուինների դեմ,—միանգամայն բնական և և պլանային, սկսել բռնական աշխարհի վասառուների վոչնչացման դժվարին գործը, այն պարագիտաների վոչնչացման, վարոնք ազրուում, թռւնավորում ու խժուում են աշխատանքային հացի հսկայական մասը: Հայշանական և, վոր հակամուխուույին համամիութենական արշավից հետո կհայտարարվի նույնպիսի արշավ առնեաների, մըկների և այլ կրծուների դեմ, վարոնք նույնպիս հսկայական քանակությամբ հացահատիկ և այլ մննդանյուությեր են վոչնչացնում:

Աշխատավոր մարդկությունը քիչ թշնամիներ չունի նաև միջանաների ու միկրոորդանիգմների աշխարհից, այդ առազդության վասառուները նույնպիս պիտի վոչնչացվեն: Այսպիսով, յերկիրը պարագիտից մաքրելու համար, պատմության կողմից կոչված յերիտասարդ դասակարգի անխօրատակելի ու միշտ հարաձուն եներդիայի դեմ են ծառանում նորանոր մարտական խնդիրներ, վորոնք գաստիարակում, ընդլայնում և խորացնում են դասակարգի կամքը՝ սոցիալական կյանքի նոր պայմաններ, նոր կուլտուրա ստեղծելու համար:

Վորքան բարձր, վորքան պարզ ու հաստատուն և նպատակը, այնքան ել ավելի արագ և ընթանում յերկու ուժերի՝ պիտակցության ու կամքի դարգացումը. ուժեր, վորոնց ամուլը միանությունը հաղթահարում է դեպի նպատակը տանող հանապարհին գունված բոլոր խոչնդունները—ինչպիս դրանում մնդ համոզում և բանվոր դասակարգի ստեղծած, որովհետարիատի դիտակցության ու կամքի կադմակերպչական կենսարոնի՝ կոմկուսակցության պարմանալի աշխատանքի 16 տարիները:

Կոմիերիամիությանն իմ բարեկամական ցանկությունները շատ կարճ են՝ ավելի մնծ ուշազըռություն գիտությանը: Աշխարհում պրոլետարիատի իշխանությունը հաստատելու պայքարում զիտությունն ամենահատու և ամենազոր զենքն և հանդիսանում է Յենի, հետո, ընկերներ, հասկանալիք յե, վոր յես ամբողջ սրտով ցանկանում եմ ձեզ լրիվ հաջողություն ձեր սկսած այդ լրջագույն գործում, և նրա հաջողությանը միանդամայն հագաւացած են:

## I. ՀԱՆՈՒՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐԱ- ԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ՀԱՆՈՒՆ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ՎՈԶՆՉԱՑՄԱՆ

Ո՞վ չի տեսել մալախոտերով խեղդված արտ. բամբակի նվազ, խղճուկ թիկերը խնդղվում են մոլախոտերի մեջ: Յորհնի այն գաշ-  
ուր, վորտեղ վայրի խոտերը հաղթել են ցորենին, ճնշել են նրան, մարդու կատարած հսկայական աշխատանքն իդուր և անցել, բերքը չնշին եւ:

Այս բոլորն անհատական, անկուլտուր յերկրագործության  
ժամանակվանից մնացած պատկերներ են: Բայց, գֆրախտարար,  
կողեկտիվ ու խորհրդապային մնանառությունների մնամամանության  
դաշտերում, մալախոտը գնես մնում և վորպիս կենսունուկ,  
վնասող ուժ, —ցարական, անհատական անկուլտուր յերկրագոր-  
ծությունից մնացած մի ամոթալի ժառանգություն:

Սոցիալխոտական բերքի ամենավտանգավոր դոզ — մոլախոտը  
կուլտուրական բույսերից խուռած և նրանց անդը, մնունդը, ջուրը,  
արեվը և ուշը: Դաշտերի պարագիտների կյանքը փրկվում և կուլ-  
տուրական առևյօնը մանով, ցածր բերքով: Մոլախոտերի պատ-  
ճառուվ, մեր յերկիրն ամեն տարի կորցնում և մոտ 300 միլիոն  
ցենտներ հայ, միլիոնավոր ցենտներ բամբակ, շաքարաճակնդեղ,  
բանջարեղեններ և այլն:

Կարող ենք արգելոք այլիս հանդուրժել բերքի այսպիսի խե-  
լադար վատանում: Մեր յերկիրը՝ աշխարհի ամենախոշոր յերկրա-  
գործական յերկիրն եւ, մեր սոցիալխոտական անանուռությունները  
(կումանատեսությունները և խորհանանությունները) պետք ե  
տան սոցիալխոտական բերք:

Ահա թե ինչո՞ւ յերկիրը և կուսակցությունը յերկրորդ  
հնգամյակում զյուղատնտեսության կենարունական և պլխավոր  
խնդիրն են համարում — բերքատվության վճռական բարձրա-  
ցումը, զյուղատնտեսական աշխատանքների բարձր վորակը:

Մոլախոտերը «աստծուց» չեն և վոչ ել ողից են վերցվում,  
այլ առաջանում են դեպի հողը և ադրբոտեխնիկան ունեցած խայ-  
տառակ վերաբերմունքի հետևանքով:

Ի՞նչպիս ազատել մեր գաշտերը կանաչ մնաստուներից:  
Առաջին հայացքից թվում և թե դրա համար բավական և միայն  
հողը լավ քաղհանել: Սակայն այդպիս կարող և մտածել միայն  
վնա, ով չգիտի ազըստեխնիկայի հիմունքները, միայն քաղհանո  
գործը գլուխ չի գտ:

Մաքրասեր մարդու մտքնի վրա յերբեք պարագիտներ չեն լինում, նրանք պատշաճ են գալիս միայն կեղծի, անմաքրության դեպքում։ Այդպիս են և մոլախոտերը դաշտում։ Դաշտաների պարագիտները—մոլախոտերը—յերեան են գալիս ազրոտեխնիկական փնթիռության և գեղի հողի խնամքն ունեցած խոյտառակերպությունների հետանքով։ Մենք ինքներս, համար անտեսելով ազրոտեխնիկան, մոլախոտեր ենք սերմանում և դրանով վոչնչացնում մեր իսկ աշխատանքը։

Յանում ես չմաքրված, մոլախոտերի սերմերով վարակված սերմացու, ուրեմն՝ ինքու մոլախոտ ես սերմանում։ Վարում ես նոսր, վոչ այնպես, ինչպիս պահանջում ե տպրոտեխնիկան, դրանով իսկ խանդարում ես կուլտուրական բույսի նորմալ պարզացումը։ Նա չի կարողանում խորը արմատակալել, չի կարողանում ուայքարել մոլախոտերի դեմ և մոլախոտերը ճնշում, իսեղողում են նրան։ Հողից չես հանի մոլախոտերի արմատները, դրանով ինքու հողում թողած կլինես նրանց կյանքի համար նոր ազբյուր Յերկար տարիներ նույն հոգում միենույն կուլտուրան կմշակես, ցանքաշրջանառություն չես մտցնի—դարձյալ ինքու հնարավորություն կտաս մոլախոտերին հարմարվելու տիյալ կուլտուրային և մի առ ժամանակից հետո դառնալու դաշտի տերն ու տնօրինը։

Պարզ ե, վոր մոլախոտերի դեմ պետք ե ուղղել վոչ միայն հողուրագը, այլև ազրոտեխնիկայի զենքերի ամբողջ զինանոցը՝ խոր վար, ցանքաշրջանառություն, սերմերի զտում, հողի մշակման բոլոր ձևերը, մի խոսքով ազրոտեխնիկայի ամբողջ ֆրոնտով շարժվել քերքի ամենազուսերիմ գիշատիչների—մոլախոտերի դեմ։

Վերջին տարիներում կուտանսությունների և խորհանտեսությունների դաշխերում մոլախոտերը նույնիսկ ավելի յեն ուժեղացել Մոլախոտի մեջ կուլակը տեսնում և իր հավատաքիմ զինակցին՝ կուտանսասային հզորության դեմ, բերքի դեմ պայքարելու գործում։

Վերջինս Միութենական Հողժողկոմատի որդաններում հայտարերվեց վասարարների մի կաղմակերպություն, վորը (վորպես մասսարարության մի մեթոդ գյուղատնտեսության մեջ) դիտավորյալ կերպով դաշտերը վարակում եր մոլախոտերով։

«Կոմսոմոլսկայա Պրավդա»-յի նախաձեռնությամբ 1933 թվի հունվարին հայտարարվեց համամիութենական կոմյերիտական

արշավ մոլախոտելի դեմ «Կոմսոմոլակայա Պրավդա»-ն և մեր գյուղատնաևսական գիտության խոշորագույն ներկայացուցիչները համառէ կոչով գիմեցին բոլոր կոմյերիտականներին և Կոմյերիտմիության կազմակերպություններին, սուրբ յերիտասարդ կոլտնտեսականներին, ազգունումներին, ազգութեանիկայի և ընդհանրապես դիմության բոլոր աշխատողներին — արշավի յիշնել մոլախոտելի դեմ:

Կոմյերիտմիության այդ նախաձեռնությունը կուլտուրական և քաղաքական խոշոր նշանակություն ունեցող նախաձեռնություն եւ:

Մրանից յերեք տարի առաջ Կոմյերիտմիությունն իր գրավերցրեց մեկ միլիոն սիլոսի հորերի ու իրամատների պատուսիանատվությունը և իր ենտուրիազմով հասակ նրան, վոր սիլոսը խոշոր չափով մուտք գործեց մեր գյուղատնանության մեջ: Այժմ Կոմյերիտմիությունը, հանուն հեղափոխական գործոն ազգութեանիկայի, բարձրացնում և պայցքարի դրոշը՝ արշավ մոլախոտելի դեմ լոգունգով: Սա ժամանակակիր կամպանիա չե, այլ ամբողջ տարվա ընթացքում տարվող յերկարատե, համառ ու ամենորյա աշխատանք. սա պայցքար և բերքատվության բարձրացման և մոլախոտելի վոչնչացման համար, սա պայցքար և յերկրագործական բարձր կուլտուրայի համար:

Կոմյերիտմիության շեֆությունը սիլոսի վրա, ձիռ վրա, և այժմ նրա հայտարարած արշավը մոլախոտելի դեմ, ցուցանիշներ են այն բանի, թե Լենինյան Կոմյերիտմիությունը քաղաքականակես վճրքան և անել, վորն իր ամբողջ ուժն ի սպաս և դնում կուսակցությանը, այն ոգտագործելու, հատկապես գյուղատնատեսության հետամնաց բնագավառներում:

Մոլախոտելի դեմ Կոմյերիտմիության կողմից սկսված որպաշտվը լայն արձագանք և գտել մի շաբք կոմյերիտական կազմակերպությունների, թերթերի, հողային և գիտական աշխատավորների և որդանների կողմից:

Յեկ Կոմյերիտմիության կողմից տարվող այդ արշավը դառնում և ազգութեանիկայի համար մղվող ամբողջ պայցքարի դրոշը:

Բարձր բերքի համար մղվող պայցքարի ընդհանուր ֆրոնտում արշավը մոլախոտելի դեմ հանդիսանալու յեշխողորագույն գործոն ուժի: Այս բանն այնքան ավելի շուտ կկատարվի, վորքան շուտ կոմյերիտականների և յերիտասարդ կուտնաեսականների բազմամիլիոն մասսան իսկապես հիմականա այդ կամպանիայի

ամբողջ նշանակությունը. կհասկանա, վոր մոլախոտերի զեմ տարգող արշավի լողունդներն իրենց մեջ ընդպրկում են ցածր բերքի դեմ տարգող արդրութեանիկալան հարձակման ամբողջ շղթան:

Գյուղատեսական բոլոր աշխատանքների բարձր վորակով խփել մոլախոտերին, նշանակում և հասկանալ այդ արշավի խընդիրները և իրականում պայցքարել բարձր բերքի, կողանահության բարձր յեկամտի և կողանահութեականի ունեոր դառնալու համար:

Բայց հասկանալի յե՞ն արգովք հակամոլախոտային պայցքարի խնդիրները, պարզաբանված են նրանք ինչորեւ հարցնեն և, — ատիպ-ված ենք այս հարցին դատախանել ովոշ:

Անդրկողիկասի կոմյերիտականների կողմից գետ շատ թույլ և ծագարված արշավը մոլախոտերի դեմ: Ամենուրեք հանդիպում ենք ամբողջ շրջանային կազմակերպությունների, վորոնք կոմ դեռ չեն մտել արշավի մեջ, կամ յեթե մտել ել են, ապա միայն խռովով: Կան բաղդամթիզ կոմյերիտական կազմակերպություններ, վորոնք աշխատում են ապացուցել, վոր ամյալ զշանի պայցման-ներում՝ իբր թե չի կարնելի այդ արշավն անցկացնել, վոր «մեղ մոտ, մինույն և, կոմյերիտականները կոտրհաննեն մոլախոտերը»:

Անդրկողիկասի կոմյերիտականների արշավը մոլախոտերի դեմ, վորոշ ուշացումով ըստ եյության, դեռ նոր և սկսում ծագվալիք: Եց ուշացման պատճառով մենք անցյալ ատարի աշխաթող արինք մի շարք աշխատանքներ, վորոնք մոլախոտերի վոչչոչցման տեսակետից շատ կարեւը նշանակության ունեցին:

Այս բոլորն ապացուցում են, վոր արշավի հաջողության համար նախ և առաջ անհրաժեշտ են վերջ տալ հակամոլախոտային պայցքարի խնդիրները շնորհանալուն: Դյուղատնտեսության տեխնիկային տիրտապետելու համար պետք է «քիչ ճառել և ամենի շատ աշխատել», իսկ այժմ այդ ըստ եյության նշանակում են խորապես յուրացնել մոլախոտերի դեմ տարգուզ կոմյերիտական արշավի ադրուենիկալուն խնդիրները:

Բավական և թիթեամսություն անել, և ընդհանրապես դեռ կալարեն:

Վորպեսզի միլիոնավար յերկտասա ըդությանը դեկավարեց վորպեսզի «արշավ մոլախոտերի գեռ» լուսնդով կոլտնտեսական մասսային դեպի բարձր կուլտուրական յերկրագործության ուղին առաջնորդել, անհրաժեշտ և լավ ծանոթ լինել յուրաքանչյուր մոլախոտի, գիտենալ նրա առանձնահատկությունները և նրան վոշնչացնելու միջոցները:

Ահա թե ինչ և ասլած «Կոմսոմոլսկայա Պրավդա»-յի կոչի մեջ՝  
«Յուրաքանչյուր կոմյերիտական, յուրաքանչյուր կոմ-  
յերիտական խմբակ, յուրաքանչյուր ըջիջ ու շըջկոմ պա-  
տասխանատու յեն իրենց զաշտերի մաքրության համար»:  
Միավորենք կոմյերիտականների, կոլտնտեսային ու աղբո-  
տեխնիկական հասարակայնության ուժերը գիտության մարդ-  
կանց հետ Հարվածենք մոլախոտերին, կիրառելով ձիչո-  
ցանքաշրջանառություններ, պահպանենք աղբոտեխնիկայի  
ասրբութական կանոնները վորակական գարնանացանով»:

Յերկրորդ ճնշամյակի յերկրորդ բերքը, — ահա մոլախոտերի  
դեմ տարած պայքարի մասին, — Անդրկովկասի բջիջների և կոլ-  
տասխանությունների հաշվետվությունն ամբողջ Միության տուած:  
1934 թ. զարունը գարձնենք զաշտերի միլիոնավոր հարվածային-  
ների — սոցիալիստական արտերի մոլախոտերի դեմ տարվող պայ-  
քարի սկզբունքը:

Արշավի ոլոնը պետք է մշտեկել, նկատի ունենալով տվյալ  
շրջանի ամենավտանգավոր և տարածված մոլախոտերը: Այդ  
ոլոնում պետք է նախատեսել տարածության բաշխումն ըստ  
կուլտուրաների, նկատի ունենալով մոլախոտերով վարակված  
լինելու աստիճանը, ճիշտ ցանքաշրջանառություններ կիրառելու:

Պայքարի կոնկրետ միջոցները (գներ մոլախոտերը պիտի  
վոչնչացնել, վներ ժամկետներին և ինչ միջոցներով):

Մարդկանց և ղեկավարների դասավորումն ըստ աշխա-  
տանքների:

Պարբերական հսկողություն նշված ձեռնարկումների և աղ-  
բումինի մուտքի հատարան վրա.

Աղբումուսուցման և լայն աղբուղուղագանդայի կազմակեր-  
պում.

Շրջանային, մարդային, յերկրային և հանրապետական  
կենտրոնները պետք է ասլահովեն տեղերի կոնկրետ զեկավարու-  
թյունը, նրանց հրահանգումը, գրականության մատակարարումը  
և այլն:

Այդ յենթաշրջանային պլանը պետք է հասցնել մինչև կոլ-  
տնտեսական բրիդադան, մինչև խորհունակեսության լուրաքանչյուր  
մասնիկը, պլանի մեջ անպայման մտնելով տեղի պայմանների  
ու առանձնահատկությունների վերաբերյալ ուղղումներ:

«Պայքարը մոլախոտերի դեմ» — ընդհանուր պետական խըն-  
դիր և նա պետք է ծավալվի սկսած կոլտնտեսությունից, խորհ-

տնառնությունից, ՄՅԿ-ից, փորձակայանից մինչև համամիաւթենական գիտական ինստիտուտները Այդ խնդրի լուծման մեջ շահագրգուժած ենք մենք բոլորս, — ողբոներից մինչև ծերունի կուտնառականը, կարմիր բանակայինից, արակառորխատից մինչև ազգունուժը, մինչև զիտության առաջարիզում աշխատառները:

Դուքս յելե՛ք պայքարի մոլախոտերի գեմ, կազմակերպե՛ք աքտերը մաքրելու համար մարտական ջոկատներ Համախմբեցմբ բոլոր ուժերը յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարվա բերքը պաշտպանելու համար Մոլախոտերն անհրաժեշտ է վոչնչացնել, նրանք կվեչնչացվեն:

## II. ՄՈԼԱԽՈՏԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ, ԲԱԶՄԱՆՈՒՄ ՅԵՎ ՎՆՍՍՈՒՄ

### 1. ՎԱՅՐԻ ԲՈՒՑՍԵՐԻ ԱՀՐԵԼԻ ԳՏՂԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Յեթե համեմատելու լինենք, թե վորքան սերմ կարող է տալ կուլտուրական բույսը և վորքան սերմ և տալիս մոլախոտը, ապա կտեսնենք, վոր մոլախոտերի պաղավետությունն ապկեցուցիչ են:

Տորենի մեկ հատիկն ամենալավույն պայմաններում և հազվագյուտ գեղգում կարող է տալ 1200 հատիկ իսկ, որինակ՝ կպչուկը սովորաբար տալիս ե 5000-ից ավելի սերմ. նա պատկանում է այն մոլախոտերին, վորոնք տալիս են 10000-ից պակաս սերմ: Սակայն այդպիսի մոլախոտերը շատ քիչ են: Մոլախոտերի մեծամասնությունը մեկ անգամ պաղաքերելին, յուրաքանչյուր բույսը տալիս ե 10.000-ից մինչև 100.000 սերմ: Որինակ՝ վուշը տալիս ե 35.000 սերմ: Շատ մոլախոտերը յուրաքանչյուր պաղաքերության ժամանակ տալիս են 100.000-ից ավելի սերմ: Որինակ՝ մեկ մոտ շատ տարտծված ամարանտի (հավակառար) մեկ բույսը տալիս ե կես միլիոն սերմ, ճրագախոտը՝ 143.000 սերմ և այլն:

Ի՞նչ կլիներ, յեթե մոլախոտերի այնքան շատ սերմերը բույրն ել սերունդ տային: Պրոֆեսոր Կերները շատ հետաքրքիր հաշվենք ե կատարել Մոլեխինդի (հիոսցիամուս նիզեր) մեկ թվից մի տարվա ընթացքում սովորաբար ստացվում ե 10.000 սերմ: Յեթե հաջորդ տարին այդ բոլոր սերմերը ծլեյին, զարգանային և նրանցից յուրաքանչյուր դարձյալ տար 10.000 սերմ և այդպես շաբունակվեր, ապա 5 տարուց հետո մոլեխինդի այդ մեկ թվից

այնպիսի սերունդ կստացվեր, վորը կկարողանար խիտ կերպով ծածկ կել յերկրագնդի ամրող ցամաքը:

Ձրկոտիմը, վորը տալիս և 730.000 սերմ, յեթե տռանց վոր և խոչընդունի բազմացվի, ապա յերեք տարուց հետո մեկ թուփը կտա այնպիսի մի սերունդ, վորի համար անհրաժեշտ կլինի գտնել մեր յերկրագնդից 2.000 անգույն ավել մեծ տարածություն:

Բայց մոլախոտերը միայն սերմով չեն, վոր բազմունում են, նրանց մեծամասնությունը միաժամանակ բազմանում են նաև արմատներով, կոճղաբատներով, պարարներով, բողբոջներով և այլն վերեվից հարձակում են գործում սերմերը, իսկ ցածից՝ կոճղաբատները, և ինչպիսի կենսունակություն: Հողի մեջ թողեք սեղի թեկուզ մի փոքր կոճղաբատ, նրանից գեպի բոլոր կողմերը, ճյուղավորություններ կառաջանան ու մոլախոտը կսկսի ուժեղ դարձանալ:

Պատասաւի արմատները հողի մեջ գնում են 2 մետր խորությամբ: Փորձեք հողի մեջ նրա արմատներից թողնել թեկուզ մի կտոր-նրանից բոլոր ուղղություններով կսկսեն աճել ու զարգանալ նոր բույսեր: Յաւրաքանչյուր դյուրացի հաճախ դիտած կիւնի, թե ինչպես քաղնանից հետո, յեթե մոլախոտերի արմատներից թեկուզ մի փոքրիկ կտոր մնացել ե հողի մեջ—արագությամբ կպչում ե, կենդանանում ու զարգանում ե: Պատահում ե նաև, վոր ամբողջովին քաղնանված մոլախոտերը մնում են հողի յերեսին ընկած և յերկար ժամանակից հետո, յիշը հողը ջրում ենք կտա անձրև և գալիս, նրանք կպչում ու կանաչում են:

## 2. Ի՞նչպես են ՏԱՐԱԾՎՈՒՄ ՄՈԼԱԽՈՏԵՐԸ

Բնությունը, բուսական աշխարհի վայրենիներին—մոլախոտերին ոժութել ե ինքնատարածման զարմանալի բազմատեսակ միջոցներով: Բոլորին հայտնի բնութափիկն (տարաքսակում ոփեցինալիք) ունի շատ թեթև սերմեր, վորոնք քամու ամենաթույլ հոսանքից տարածվում են զանողան կողմեր կան մոլախոտեր, վորոնց սերմերը տեղափորված են լինում տուփիկների մեջ. այդ տուփիկները սերմերը հասնելու ժամանակ ուժեղ թափով բացվում են և սերմերը գուրս զպրում: Կան մոլախոտեր եւ ինչպես որինակ՝ ծիծեռնախոտը (խելիղոնիում մայուս), վորոնց սերմերը պատած են քաղցր հյութով. մրջումները հավաքվում են զրանց վրա, և այդպիսով հանդիսանում են այդ սոլախոտի տարածողները: Թելուկի, յեզան լեզվի և մի շարք այլ մոլախո-

տերի սերմերը հաճախ կերերի հետ միտուն ընկնում են կենդանիների ստամպօքը, սակայն այնտեղ նրանք չեն մարսվում և հնատագայում, կղկղանքի հետ դուրս գտլով՝ տարածվում են դաշտերում:

Ամենքն ել տեսել են, թե ինչպես դաշտում մարդկանց շաբերին կամ կենդանիների մաշկին բազմաթիվ մեծ ու մանր փշեր են կալչում. դրանք մոլախոտերի սերմեր են, վորոնք մարդկանց ու կենդանիների միջոցով տարածվում են: Անձրեները և վառդաման ջրերը նույնպես մոլախոտերի սերմերի տարածման հրաշալը միջոց են հանդիսանում:

Եյտիսով՝ քամին, ջուրը, միջատները, կենդանիները և մարդը մոլախոտերի ճանապարհորդության զանազան տեսակներն են հանդիսանում: Սակայն այս բոլորից ամենավտանգավորը թերեւ մարդն է, յերբ նա չգտած սերմ ցանելով՝ մոլախոտերի միլիանավոր և միլիարդավոր սերմեր և մացնում հոգի մեջ:

### 3. ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԳԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սկզբում արդեն ասացինք, վոր յերկիրն ամեն տարի մոլախոտերի պատճառով միլիոնավոր փթերով պյուղատնեսական մթերքներ և կորցնում:

Մենք մեծ աղմուկ ենք բարձրացնում, յերբ մեր ցանքերի վրա հարձակվում ե մորեիր, յերբ կարկտահար են լինում կամ հեղեղը փշացնում ե մեր ցանքերը, սակայն տարերային այդ բոլոր աղետներն ավելի քիչ վնաս են հասցնում, քան մոլախոտերը, վորովհետև վերջիններիս պատճառած վնասը մշտական ու ամենուրեք:

Պոչուկը, վորը դարձանում և հացանատիկների մեջ, մի քանի անգամ ավելի շատ ջուր և խուռմ հողից, քան ցորենը նա չորացնում ե հողը և գրանով յերաշտի գնը և կատարում: Բողկուկը հողից շատ ավելի աղոտ և կիր և վերցնում, քան կուլտուրական բույսերը:

Մոլախոտերը հափշտակում են այն սնունդը, վորը պիտի ստանային մեր ցանած կուլտուրական բույսերը, կան մոլախոտեր, վորոնք աղբուկի պիս կապչում են կուլտուրական բույսերին, ծծում են նրանց հութերը և դրանով մեռցնում նրանց: Որինակ ծխախոտի, արևածաղկի, պամիգորի և մի շարք այլ բույսերի վրա յերեկն զարգանում ե մի շատ սոսկալի մոլախոտ—նրագախոտը: Դա պարագիտ բույս է, վոր աճում և ուղղուկի այդ կու-

տուրական բռւյսերի արմատների վրա և սնվում ու զարգանում է նրանց հաշվին: Մի ուրիշ պարագիս բռւյս—գաղձը, կարող և այնպես ուժեղ փաթաթվել առվույտին, յերեքնուուկին, վոր ուղղակի մեխանիկորեն կխնդրի նրանց:

Իսկ ամեն տարի մոլախոտերը քաղճանելու համար ի՞նչպեսի հսկայական աշխատանք ե վատնվում:

Մոլախոտերի սերմերով ցորենի և գարու աղբատվածությունը յերենն հասնում և հատիկների քաշի 30—40 տոկոսին: Այս հանդամանքը մեծ չափով ոցում և հացահատիկի վորակն ու արժեքը: Դեռ ավելին, հաճախ հացահատիկների մեջ ընկնում են թունավոր սերմեր, վորոնք բավականին լուրջ հիվանդություններ են տուածացնում: Որինակ՝ մեր մի շաբք զբաններում հացահատիկը յերբեմն բավականին դպահի չափով փարակվում և վորոնմերով: զբանք մոլախոտերի մանր սերմեր են.—որինակ՝ յավշան և այլն, վորոնք կիրու տավարն ուտելով, նրանց կաթն ու յուղը դառն տհաճ համ են ստանում:

Մեր բամբակի դաշտերում հաճախ կարելի յե դիտել հետեւյալ պատկերը: Իրար կից յերկու հողամաս, մեկը լավ մշակված ու քաղճանված, իսկ մյուսն ամբողջովին մոլախոտերով ծածկված: Այս վերջինն ամբողջովին ծածկված և միջատների աշխարհի մասսատուններով, իսկ առաջինի վրա վոչ մի մասսատու Մոլախոտերը մասսատու միջատների տարածման ոջախներ են հանդիսանում:

Պրոֆեսոր Մալցեվը մոլախոտերի պատճառառած կորուստները հաշվելու հետաքրքիր փորձ ե կատարել:

Ամեն մի կուլտուրայի համար վերցընել և յերկու միտանսակ հողակտոր, դբանցից մեկը քաղճանվել և շատ ինամքով, իսկ մյուսի վրա ազատ կերպով զարգացել են բազմաթիվ մոլախոտեր՝ փուշ, իշակաթնուուկ, թելուկ և այլն: Հետազայում, յերկու հողամասերից ստացված բերքը համեմատել են և պարզվել ե, վոր չը քաղճանված հողամասի բերքը հետեւյալ կորուստն և ունիցել՝ լորի՝  $55^0/0$ , յեգիպտացորեն՝  $59—89^0/0$ , կարտոֆիլ՝  $54—67^0/0$ , ճաւկնդեղ՝  $97—99^0/0$  և այլն: Ճակնդեղի կորուստից մենք տեսնում ենք, վոր մոլախոտերը կարող են վոչ միայն պակասեցնել բերքը, այլև ամբողջովին այն վոչնչացնել:

Մըանից 20 տարի առաջ, նախկին Յեկատերինոսալվի, նաև հանդում (ներկա Դնեպրոպետրովսկ) տեղեկալիթյուններ եր հավաքված, թե մեկ տարում պոչուկի պատճառով թնչքան մասս և ստացվում: պարզվեց, վոր այդ մասսը հասնում և 20 միլիոն տուբ-

լուս Հետագոտությունները ցույց են տվել, վեր ԽՍՀՄ-ում մոլախոսերի պատճեռով յուրաքանչյուր հեկտարից միջին հաշվով 624 կմէտ աշորացի և 428 կմէտ վարսակի ընդք պակաս ենք ստանում:

Մոլախոսերի այս բազմապիսի խառապավությունը յերկրի ժողովրդական անտեսությանը, պյուղատնտեսության բնագավառում, հսկայական վեաս և հասցնում:

### III. ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅՈՎ ԽՓԵԼ ՄՈԼԱԽՈՏԵՐԻՆ

ՅԵՐԿՈՒ ԽՆԴԻԲ—ԿԱՆԽԵԼ ՅԵՎ ՎՐՉՆՉԱՑՆԵԼ.

Յերբ գաշտում արգեն մոլախոտեր կան, նրանց քաղհանում են, արմատահան են անում, այրում են և այլն, այսինքն՝ մոլախոտերին անմիջականորեն վունչ ացնում են Բայց ավելի կարեռ և մոլախոտերի առաջանալը կ ան ի ի ը Այսինքն՝ գիտենարդ մոլախոտերի առաջանալու աղբյուրները, նախորդք միջոցներ ձեռք առնել, վորպեսզի նրանք չառաջանան ու չտարածվին:

Մոլախոտերի գեմ պայքարելու այգպիսի «պրոֆիլակտիկ» (կանխող) միջոց և որինակ՝ սերմերի զտումը: Կամ գաշտը թարմ դոմաղբով չպարաբացնելը, վորովինետն թարմ դոմաղբը համարյա միշտ իր մեջ պարունակում և բազմաթիվ քանակությամբ ծերու ընդունակ մոլախոտերի սերմեր, վորոնք դոմաղբի հետ գաշտ տարիելով՝ վարակում են մեր հողերը: Յեթի զոմաղբը մի առ ժամանակ պահպան և, ապա նրա միջի մոլախոտերի սերմերը կորցնում են իրենց նշանակությունը Հին գոմաղբով դաշտը պարաբացներին մննք կանխում ենք նոր մոլախոտերի առաջացումը:

Անա այս պատճառով ել մոլախոտերի գեմ տարվող ծավալուն պայքարը միաժամանակ յերկու խնդիր և դնում կանխել և վոչընչացնել:

Գոյություն ունեցող կանխող գլխավոր միջոցները հետեւյալներն են՝

1) Ցանել միայն առողջ և զաված սերմ, 2) համառորեն մաքրել հողը մոլախոտներից, 3) ժամանակին կատարել վաղ ցանք, 4) դաշտ տանել միայն քայքայված դոմաղբ, 5) միջնակները հաճախ վարել:

Վոչնչացնող միջոցներն են՝ 1) այրել մոլախոտերը, 2) քաղհան և կուլտիվացիա, 3) հողի մշակությունը՝ կապված ցանքաշրջանառության, 4) պայքարը քեմիկական նյութերով, 5) մոլախոտերի վոչնչացումը հատուկ միջոցների և այլ որդանքովների ոգնությամբ (կենսաբանական մեթոդ):

## Ա. ԿԱՆԵԼ, ՄՈԼՈՒՌԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

### 1. ՑԱՆԵԼ ՄԻԱՅՆ ԱՌՈՂՋ ՑԵՎ ԶՑՎԱԾ ՍԵՐՄ

Վոչ մի գեղագում թույլատրելի չեն հացանատիկային կուլտուրաների չզտված սերմ ցանելը Սերմացուն անպայման 100% օ-ովլ պիեռը և զտված լինելը Այս և պահանջում պարտադիր ազգութիւնիւմումը Չնայած դուռն, տեղիքում զեռ շատ շատերը ազգաւեխնիկայի այս տարրական մկրունքը չեն հոսկացնել Ահա, թե ինչու, գեռ շատ տեղիքում սերմացույի զաման խնդրում մենք հակայական ձեզվածքներ ունենք. ահա, թե ինչու, գեռ շատ շատերը ցանում են միլիարդներով մոլախտերի սերմերի խառնուրդով սերմացուն Այստեղ պարզ կերպով յն բեռում և գասակարգային թշնամու ազգեցությունը. նա հենվելով կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների փորոշ մասի պատեհնական տգիտության ու հետամացության վրա, յեռանդուն կերպով այս շահագործում եւ

Սերմացուն ամենայն խնամքով պետք և մաքրել մոլախտային խառնուրդներից, բայց վոչ այնպես, ինչպես այդ անում են գյուղացիներից վոմանք՝ սերմը թիով այս կողմից այն կողմ գցելով և քամուն տալով, այլ անպայման պետք և մաքրել մեքենաներով՝ տրիերով, քամնարով, տեսակավորող մեքենայով, սերմագտիչ ուսուկով և այլ մեքենաներով:

Միայն սերմի զառումն արդեն հացանատիկային կուլտուրաների ըերքը 20—30 առկոսով ավելացնում եւ Զտելիս պետք և ինստ կերպով հետեւ, վոր մեքենաներն ու պարկերը միանգամայն մաքուր լինեն, վորպեսզի նրանց միջոցով սերմացուն նորից չաղրատվի:

Այլ յերկրներից կամ շրջաններից սերմացու ստանալիս, պետք և շատ զգույշ լինելը հակառակ դեպքում այդ սերմացուի հետ նոր մոլախտերը կարող ենք բերել ու մեղ մոտ տարածեն Այդպիսի գեղագքերում ստացված սերմացուն անպայման պետք և ուղարկել մատակա սերմ ստուգող կայանը և նրանց թույլտվությունից հետո միայն ցանել:

Ցեֆե սերմագտիչը այնքան ել չի համապատասխանում աըս վյալ սերմին և դտելուց հետո ել վորոշ մոլախտերի սերմեր չեն զտվում, ապա այդպիսի դեմքերում այդ սերմացուն պիտի փոխարինել նոր սերմացուով:

Պակաս նշանակություն չունի և բամբակի սերմացուի զըտումը Սակայն բամբակը դտում են վոչ թե մոլախտերի սեր-

մերից, այլ, այսպես կոչված՝ կարաչի գտից կամ կոխ - չի դա  
ու ից Այսպես և կոչվում մենք կանոչ գույնի, մերկ, վասակար  
սերմերի խառնուրդը Այդ սերմերից կամնաշում ևն նույնովիսի տ-  
ողջ, նորմալ բամբակենու թփեր, ինչպես և թավշապատ սեր-  
մերից, սակայն սրա կնդուզները ամբողջովին լցված են լինում  
մերկ, մենք սերմերով, այսինքն՝ առանց բամբակի Յանել այդպիսի  
սերմ, կնշանակի սկզբից արդեն անհաջողության ժամել՝ բամբա-  
կի բերքը, մի բան, վորը կարող է ցանկանալ միայն դաստիար-  
գային թշնամին, և վորն իգուր չե, վոր շարունակ գիմազրում և  
բամբակի սերմի դամանը:

## 2. ՀԱՄԱՐԻ ԿԵՐՊԻՆ ՀՐԴԸ ՄԱՔՐԵԼ ՄՈԼՍԽՈՏԵՐԻՑ

\* Հողի կանոնավոր և լազ մշակումը հանդիսանում և մելախո-  
սերի առաջանալը կանխող միջոցներից համարյա ամենազվար-  
վութը: Հողի վարելաշերաը միաժամանակ մոլախոտերի սերմերի  
հակայական շանմարան և հանդիսանում ինչպիսի հետազոտությունը  
ցույց է տվել Մերձգոլգոյան շրջանի մեկ հեկտար հողում գտնվում  
է մոլախոտերի 166 միլիոն սերմ և արմատներ, մինչդեռ նույն  
տարածություն վրա ցանվում ե ընդամենը 3—4 միլիոն կուլտու-  
րական բույսերի սերմ: ահա թե ինչպիսի թշնամական միջավայրի  
մեջ ենք դցում մենք մեր սերմերը:

Հողում գտնված մոլախոտերի սերմերի դեմ պայքարելու  
տակտիկան կայանում ե նրանում, վոր ամեն կերպ աշխատել զա-  
նազան միջոցներով և պրովակացիային յենթարկել (այսինքն ստեղ-  
ծել այնպիսի պայմաններ, վոր մոլախոտերը ծլեն) և վոչնչացնել  
նրանց: Յանկալի յե նաև հողից հանել ու հավաքել արմատները:

Զմանվա արաթը պրովակացիայի լավ միջոց ե: Արաթից հետո,  
վաղ գարնանն այդ հողամասի վրա բազմաթիվ մոլախոտեր են  
դուրս գալիս, վորոնց վոչնչացնելու համար անհրաժեշտ ե կը լինա-  
վար անել:

Հացաբույսերի բերքահավաքից հետո խողանի վրա առաջա-  
նում են մի շաբթ մոլախոտեր, և վորպիսպի դրանք չանեն ու  
չզարդանան, անհրաժեշտ ե բերքահավաքից հետո բազմախով դու-  
թաններով թեթև յերեսավար (կամ խողանավար անել): Միքանի  
տարի շաբունակ հաճախակի կրկնավարով և խո-  
զանավարով մենք ամբողջովին կվոչնչացնենք հողում յա-  
ղութեամ յեղած մոլախոտերը: Հենց վոր վարած հողի վրա  
սորից մոլախոտեր յերեն, փոցիսերով կամ կուլտիվատորներով

պիտի վոչնչացները Այս աշխատանքն ամառվա ընթացքում պետք է միքանի անգամ կրկնել:

Կոճղարմատները վոչնչացնելու համար ավելի խոր կրկնավար պետք է անել, վորից հետո ատամնափոր փոցիներով հողի միջից հավաքել կտրված արմատները: Այսպիսի հողերը, յեթե վարում են ուշ աշնանը, ապա ավելի խորը պիտի վարել (18—20 սմ. և ավելի): Զմուզվա ընթացքում արմատների մնձ մասը ցրտից վոչնչանում են: Վաղ դարնանը նորից պետք է փոցինել՝ արմատների մասցորդները հավաքելու համար:

Մոլախոտերի գեմ պայքարելու ամենառավել զենքերից մեկը, դա վաղ աշնան վարն է: Պրակտիկան ցույց է տվել, վոր վաղ աշնան վարից հետո յերկք անգամ ավելի քիչ մոլախոտ և լինում, քան դարնան վարից հետո Յեթե սերմերը զտվեն և հողը կանոնավոր կերպով մշակվի, ապա կանխող այս միջոցներից մոլախոտերի քանակը յերկու և ավելի անգում կավակասի:

Սակայն մոլախոտերին ամբողջովին հաղթելու համար՝ պետք է կիրառել նաև աղբոտեխնիկական մի շարք այլ կանոններ:

### 3. ՎԱՐ ՑԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼ ԻՐ ԺԱՄ ԾՆԱԿԻՆ

Յեթե կուլտուրական բույսը ցանված է իր ժամանակին, ապա մոլախոտերի գեմ նա ավելի հաջողությամբ և պայքարում: Որինակ՝ բամբակը ցանեցեք մարտին, կամ ապրիլի սկզբներին—նա կածի շատ վատ կամ բոլորովին կվոչնչան: Ճիշտ այսպես ել շատ ուշ ցանված բամբակը ընկնում և վատ պայմանների մեջ, թույլ և զարդանում և մոլախոտերը նրան խեղդում են: Ռերեն յուրաքանչյուր բույս պետք է ցանել իր համար վորոշված վաղ ցանքի ամենալավ ժամկետին:

Ուշ կատարված դարնանացանքն ամենից շատ և մոլախոտերի կերպուր դառնում:

Ապացուցված է, վոր շարքացանի ցանքը, շաղացանի հետ համեմատած, մոլախոտերից ավելի քիչ և տուժում:

Կուլտակային մախինացիաներն ամենից լավ հանդես են գալիս հատկապես սերմանելու նորմաների խնդրում: Գողանալով սերմացուն և դիտավորյալ կերպով պակասեցնելով սերմանելու նորմաները, դասակարգային թշնամին փառուրեն թերի, նոսր ցանք և կազմակերպում, իսկ այդպիսի նոսր ցանքերը մոլախոտերից անհամեմատ ավելի յեն տուժում: Յեկ ընդհակառակը, շատ

դեպքերում, չափաղանց մոլախոտված հողերում, հայտհատիկների խիտ ցանքը ճնշում, խեղպատմ և մոլախոտերին:

Յեկայսութեա, ակետք և ցանել վագ, բայց վորոշված ժամամկետին, ցանել շաբքերով, վոչ մի դեպում չպահանելու և երմանելու նոր ժան:

#### 4. ԴԱՇՏ ԳԵՏԻ Ե ՏԱՆԵԼ ՄԻԱՑ ՔԱՅՐԱՅՎԱԾ ԴԱՄԱԴՐ

Թարմ գոմաղբը միշտ ել իր մեջ ունենում և մեծ քանակությամբ՝ կենդանիների ստամփում չմարսված, մոլախոտերի սերմեր: Այդ պատճառով ել գոմաղբով պարարտացնելով, բացի ոգուտից, կարելի յե նաև մեծ վնաս հացնել: Դրանից խուսափելու համար, միշտ դաշտ պետք ե տանել, առնվազն 5—8 ամիս ցածր ցածր գավառայիշած գոմաղբ: Գոմաղբի քայքայումն արագացնելու համար, միշտ դաշտ պետք ե տանել, առնվազն 5—8 ամիս ցածր ցածր գավառայիշած գոմաղբ: Գոմաղբի քայքայումն արագացնելու համար պետք ե կռւյտ կազմել և ժամանակ առ ժամանակ վրան գոմաղբահյութ լցնել:

Հաճախ անսառուններին կերակրում են կալսելուց և սերմերի զտությամբ հետո մնացած մնացորդներով, վորոնց մեջ մեծ քանակությամբ մոլախոտերի սերմեր են լինում: Վորպեսզի այդ սերմերի՝ կենդանիների ստամփը և առա գոմաղբի մեջ ընկնելը կանխվի, պետք ե այդ բոլոր մնացորդները, նախքան անսառուններին տալը, աղաղ կամ խաշել (գոլորշիով): Պետք ե հետեւ նաև, վոր ցամքարի մեջ ցողունների հետ միասին մոլախոտերի սերմեր չընկնեն, հակառակ դեպքում հետապայում այդ ևս կիսառնվի գոմաղբի հետ և դաշտ կդնա:

#### 5. ՀԵՐԿԵԼ ՄԻԶՆԱԿՆԵՐԸ

Անհատական տնտեսությունների հողամասերը սովորաբար մեկը մյուսից բաժանված են լինում հողի նեղ շերտերով՝ միջնակներով: Մեր խոշոր տնտեսություններում՝ կոլտնտեսություններում և խորհունտեսություններում այդ միջնակներն աստիճանաբար վերանում են: Սակայն դեռ հեռու յենք ամեն տեսակի մոլախոտերի ու մնասատունների (միջատներ, մկներ, սուսլիկներ) այդ սոսկալի վորջերի ամբողջովին վերացումից:

Սովորաբար այդ միջնակներին մարդու ձեռք չի կպչում: Մոլախոտերն այնտեղ իրենց շատ լավ են զգում և մեծ չափով սերմեր ու զանազան մնասատուններ են մտակարարում հարեան դաշտերին: Դաշտը մշակելիս մեծ մռամբ այդ մոլախոտերը յերկու կողքերից ել քիչ վարփում են, բայց ի՞նչ և այդ վարքը, յեթե վոչ

հոնություն մոլախոտերին, վիխրեցում, վորից հետո նըանք ախեիլ լավ են զարգանում:

Միջնակները վորպիս ամեն տեսակի վնասաւատուն են և առաջանարկ տածած առաջնաշաբաթյուններին: Մեր առաջազոր խորհանտեսությունների ու կոլտնատնառությունների, ինչպես նաև առաջազոր յերկրուների ազգոտեխնիկայի պրակտիկան ցույց ետալիս, վոր միջնաէները միասնամայն ավելորդ են և նրանք կուրտուրական հողերի հետ միասին համատարած կերպով պիտի վարվեն:

Ցեթեւ անհրաժեշտ ե անպայման, հողամասերը սահմանագծեր, միթե չի կարելի այդ անել ակոսներով, կամ քարերի շարերով և կամ ցեցեր ունկելով և ալին Բացի զրանից, յեթե նույնիսկ ի նկատի չունենանք միջնակների հասցրած այն մեծ փասը, վորի մասին արզեն խոսեցինք, չե՞ վոր այդ միջնակները իզուր տեղը ահապին տարածությամբ հող են դրազեցնում և այնպիսի հող, վորը կարող և մշակվել և մեծ արգյունքներ տալ:

## Բ. ՄԱԼԱԽՈՏԵՐԻ ՎԱԶՆՉԱՅՆԵԼ, ՎԱԶ ՄԻԱՅՆ ՀՈՂՈՒՄԱԿՈՎ, ԱՅԼԵՎ, ԳՈՒԹՍՆՈՎ, ԿՈՒԼՏԻՎԱՏՈՐՈՎ, ԱՅՐԵԼՈՎ, ԶՐՈՎ, ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՄԲ

### 1. ԿՐԱԿԸ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՖՐՈՆՏՈՒՄ

Վճռ մի տարի կրակը մոլախոտերի դեմ տարվող պայքարում այնպիսի մեծ կիրառում չեր ունեցել, ինչպիսին նա ունեցավ այս տարի, շնորհիվ մոլախոտերի զետ տարվող կոմյերի տական արշավի:

Զմուն վերջերին, դարնան վարից առաջ, չոր յեղանակին՝ այրելու գործողության մասնակիցները յերկար շարքով կանգնում են գաշտում (քամու ուղղության հանդիման), դաբսում են ծղութ; կամ այլ վառելանջյութերը և վառում: Կրակը լայն ֆրոնտով տարածվում է մոլախոտերով տարածված հարյուրավոր հեկտարներով դաշտերի վրայով և վոչնչացնում ե վոչ միայն մոլախոտերի ցողունները, այլև նրանց վրայից դեռ չթափված հսկայական քանակությամբ սերմերը: Այրելուց՝ մոլախոտերի վոչնչացումից ստացված սգուտից բացի, հողի յերեսին մի հավասար շերտով մոխիր և մնում, վորը, ինչպիս հայտնի յի, լավ պարարտանյութ ե: Անցյալ տարի փետրվար և մարտ ամիսներին Հյուսիսային Կովկասի կոմյերի տականներն այսպես այրելու միջոցով մոլախոտերից հազարվոր հեկտարներ մաքրեցին: Պրակտիկան ցույց ետալիս, վոր

այնտեղ, վորած նորախոտերը այս ձեռվ այրում են, բերքն դպալի շափով բարձրանում են:

Դարձնանացանից առաջ մոլախոտերն այրելու ժամանակ պետք է զգույշ ինչեւ, վորպեսզի հրդեհ չառաջանա, կամ պետք և խոսի զեզերը դաշտից հեռացնել և կամ նըրանց շուրջը վորոշ տարածությամբ հողը վարել: Դաշտից պետք և հեռացնել նաև ամեն տեսակին այրվող իրերը՝ տախտակները, սայլեր և այլն: Իսկ յեթե այրումը կատարվում է զյուղի շրջակայքում, առաջ այդ այս նախքան այդ, պետք և պյուղի շրջապատող հողերը վարել:

Պետք և ասենք, վոր նման մասսայական այրումների ժամանակ անհրաժեշտ և տեղական պայմանները հաշվի առնելի Ամեն տեղ չի կարելի միանդամեց հարյուրավոր հեղտարներին վրա այսպիսի այրում կազմակերպել: Մոլախոտերի վոչնչացումն այս ձեռվ դիմավորապես կատարում են մեծ հարթությունների վրա Անդըրկովկասում մոլախոտերն այրելու այսպիսի ձեւ այս տարիներում համարյա չի կիրառվել, բայց հետազյում, Աղքահանի վորոշ շրջաններում, նաև մասամբ Անդըրկովկասի այլ հանրապետություններում, հատկապես բերքահավաքից հետո, հակամոլախոտային արշավում կրակը կարող և հանդիսանալ վորպես մի ուժեղ զենք:

Առաջներում նույնպես մոլախոտերը այրելը վոչ մեծ չափերով կիրառվում եր, վորպես հակամոլախոտային պայքարի միջոց: Աևելքայնայի հարավում, մոլախոտերն այրելու և մարդագետինների պարարտացման համար, յերեմն կազմակերպվում են, այսպես կոչված, մարդագետնային հրդեհներ:

Դաշտի դեմ պայքարելու խնդրում կրակը բավականին փորձված միջոց և հանդիսանում: Ամենից լավ և այդ պայքարը կազմակերպել այն ժամանակ, յերբ դադը գենես մատղաշ ե: Այրումը կատարում են հետեյալ կերպ:—դադով խիստ վարւկված հողամասերի շուրջը փորում են, մեջտեղը լցնում են ծղոտ, վրան՝ նավթու վառում: Վառելուց հետո դադի աճած տեղերը անպայման պետք և փորել:

Տափաստանային միքանի շրջաններում լայն կերպով կիրառում ե ստացել հացարույսերի բերքահավաքից հետո խողանն այրելը: Այս գեպքում այրվում են մոլախոտերը և ցողունների ցածի մասը, վոր հնձելիս մնում և հողին կպած:

Կրակը մոլախոտերին վոչնչացնելու հաշալի միջոց ե, դրա հետ միաժամանակ նա հանդիսանում և վորպես դաշտի լավ ալ-

տահանիչ, վորովհետև այբելու ժամանակ վոչնչացնում են միջաւային վասատուների բոլոր ոջախները:

## 2. ՔԱՂՀԱՆԵԼ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅԵՎ ԽՆԱՄՔՈՎ.

Քաղհանը և կուլտիվացիտն, հատկապես բամբակացան շրջաններում, աշխատանքի շատ յեռուն շրջան և հանդիսանում և պահանջում ե մեծ քանակությամբ բանվորական ձեռքնր Բամբակի մշակման կամպանիան համարյա ամբողջությամբ քաղհանն ե: Մի քիչ ուշացըքիք քաղհանի ժամկետը և թույլ տվիք մոլախոտերին զարգանալու, դրանով շատ դժվարացրած կլինեք հետագա աշխատանքները և զգալիորեն կազդեք բամբակի բերքի վրա: Իր ժամանակին քաղհանը չկատարելու ոլատնառով, յերկիրն ամեն տաշի հսկայական քանակությամբ բամբակ, շաքարի ճակնդեղ, բանջարեններ և այլ հումույթներ և կորցնում:

Պետք ե խիստ կերպով կիրառել հետևյալ կանոնը—հ ե ն ց վ ո ը հ ո դ ա մ ա ս ի վ ը ա մ ա ս ս ա յ ա կ ա ն ձ ե ո վ յ ե ր և ա ց ի ն մ ո լ ա խ ո տ ե ր ի ծ ի ւ ե ր ը՝ ա ն մ ի ջ ա պ ե ս պ ի տ ի ս կ ս ե լ ք ա ղ հ ա ն ը:

Բամբակի ցանքերը մեկ վեղետացիոն շրջանում առնվազն պետք ե քաղհանել չորս տանգամ, ըստ վորում, առաջին քաղհանը պետք և սկսել մայիսի 10—15-ին, իսկ ձմեռային արաթ արած հողերում՝ ավելի վաղ: Առաջին քաղհանը հունիսի 1-ին պետք ե վերջացված լինի, իսկ վերջինը (չորրորդը)՝ հուլիսի 20-ին:

Այն հողամասերում, վորտեղ ուշ զարգացող մոլախոտեր կան, անհրաժեշտ և մեկ անգամ ավելի քաղհանել:

Ցանքից առաջ կարելի յե մոլախոտերը բավականաչափ թուլացնել, յեթե նախորոք նրանց աճումը «ազրովակացիայի» յենթարկենք և ապա յերեսավարով վոչնչացնենք: Այդ բանին կարող ենք հասնել ձմռան արաթով և ձմռան վարով, սակայն վարից հետո հողամասն անպայման պետք ե փոցխնել:

Վերջին տարիներում Անդրկովկասում լայն կիրառումն են գտնել ձիռ և տրակտորի կուլտիվատորները, վորի խոփիկները միանգամից ընդգրկում են միջանի միջշարքեր և գրանով մեծ չափով արագացնում են բամբակի քաղհանի ու փխրեցման աշխատանքներն ու նվազեցնում են բանվորական ձեռքերի այն հսկա պահանջը, վոր պահանջվում ե մշակման այդ շրջանում:

Բայց ինչպես ազատվել այն մոլախոտերից, վորոնք կուլտիվացիայից հետո յել մնում են բամբակի շաքարում: Հետո վոր կուլ-

տիվատորը միայն միջարքային տարածություններն և քաղաքում։ Այդ բացը վերացնելու համար, սովորաբար, նախքան կուլտիվատորի բաց թողնելը կամ նրանից հետո, շարքերի միջի տարածությունները քաղհանում են ձեռքով։ Ի՞նչպես մեքենայցման յենթարկության մաս այս աշխատանքը, այսինքն, վոչ միայն միջարքերինը, այլև շարքերինը, զբա համար կամ մի լավագույն միջոց, վարը սակայն տույժմ կիրառվում և միայն Միջին Ասիայում։ Բայց ակը կը պետք ե ցանել քառակում սիներով կամ շախմատաձև, այդ գեղագում հնարավոր կուլտիվացիան կը կուլտիվացիան կամ լայնությամբ։ (ցանքերի յերկարությամբ և լայնությամբ)։ Եախմատաձև՝ կամ քառակումից ցանք ստանալու համար, բամբակը ցանումնեն սովորական շարքացաններով, սակայն նորացումը կատարում են շարքերին ուղղանայաց ուղղությամբ։ Թփերը թողնելով քառակումի կամ շախմատաձև կարդով։

Բամբակացան շրջանների կոմյերիտականները յիսանդուն աշխատանք պետք ե տանեն տարածելու բամբակի ցանքի այդ ձևերը, գործնականում նրանց առավելությունը՝ սովորական շարքացանի հանդեպ ապացուցելով։

Մշակման կամպանիայի հաջողությունը վորոշում և քաղհանի վորակը։ Այս խնդրում պետք ե շատ զգույշ լինել և մեծ աշալլը ությամբ հետեւել հակակուտնտեսական ոտար տարբերին, վորոնք քաղհանի ժամանակ սիմուլյանտություն են անում։ Առաջին հայացքից թվում ե, թե նրանք իրը թե քաղհանում են, բայց յերբ ստուգում են նրանց աշխատանքը, պարզվում ե, վոր այդ սարստաժնեկները մոլախոտերը կտրել են վերեկց և ծածկել հողով։ Կուլտիկային այսպիսի քաղհանից հետո մոլախոտերը շատ արագ են աճում, իսկ յերբեմն նույնիսկ ավելի ուժեղ, քան նախքան «քաղհանը»։ Կոլտնտեսային աշխատավոր հասարակայնությունը պետք է կաղմակերպված հականարդված տա այդ ստար տարբերին, լողբերին ու հականեղափակտկաններին։

Մոլախոտերով խիստ վարակված հողերում պետք ե բամբակի ցանքն ամենից ուշ կատարել (վերջին հերթին), վորպեսզի ցանքից առաջ հնարավորությունն ունենանք կրկնավար անել և ծլած մոլախոտերը վոչնչացնելը։

Թեյի մշակության շրջաններում՝ թեյի ցանքերի մշակությունն ու խնամքը պիտի կատարվի համառությամբ ու սիստեմատիկաբար, վորպեսզի ամրապնդվի թեյի մշակության խնամքի գործում տեղի

ունեցած բեկումը և թուլ չտրվի, վոր նոր ցանքերը դոհ գնան մոլախոտերին:

Ճիշտ ժամանակին և բարձր վորակով կատարած քաղհանը խոշոր նշանակություն ունի նաև ծխախոտագործական շրջաններում: Չպետք է մոռանալ, վոր 1932 թվի ծխախոտի խայտառակցած բերքի ամենահիմնական և համարյա միակ պատճառը, մոլախոտերին ենին:

### Յ. ՑԱՆՔԱՇԲՁԱՆԱՌՈՒԹՅԱԾՄԲ ԽՓԵԼ ՄՈԼԱԽՈՏԵԲԻՒՆ

Ցանքաշբձանառությունը տնտեսությունը կուլտուրականութին ու ոլունայնորեն վարելու ապացույց և և բերքագության հիմքը: Յերբ միևնույն հողամասում յերկար տարբներ շարունակ նույն բույսն ևնք մշակում, հողն ուժասպառ և լինում, մոլախոտերը հարմարվում են տվյալ կուլտուրային, ուժեղանում և ձնչում են նրան:

Ցանքաշբձանառությունը կուլտուրաների ճիշտ հաջորդականությունն եւ Մի բուշից հետո հաջորդ տարին մշակվող բույսը հողից, զիխավորապես, վերցնում եւ այն սննդանյութերը, վորոնց նախորդող բույսը թողել է հողի մեջ, իսկ ինքն եւ, վորոշ-դեպքերում, հողը հարստացնում է այնպիսի սննդանյութերով, վորոնց պիտի ոգտագործի իրեն հաջորդող բույսը:

Կուլտուրական, պլանային տնտեսությունը, ցանքաշբձանառության ժամանակ, կտղմակերպում և այնպես, վոր ավյալ շըրջանի կամ կուլտնտեսության առաջատար կուլտուրան՝ այդ ցանքաշբձանառության մեջ նույնպես լինի առաջատարն ու զիխավորը:

Ցանքաշբձանառությունը կապված է միևնույն հողամասի վրա տարբեր կուլտուրաների ուսցիունալ հաջորդականության հետ, իսկ այդ իր հերթին ստեղծում է հողը կանոնավոր և բազմակողմանիորեն մշակելու անհրաժեշտություն: Ցանքաշբձանառունը միևնույն ժամանակ մի հզոր միջոց և հողի կուլտուրական մշակման և մոլախոտերի դեմ պայքարելու համար:

Վերցնենք մեղ մոտ տարածված ցանքաշբձանառություններից մեկը և տեսնենք, թե նա մոլախոտերի դեմ պայքարելու բնչպիսի միջոց է հանդիսանում: Մի քանի տարի բամբակ ցանելուց հետո, յերբ հողամասը ուժասպառ և լինում և ծածկվում է մոլախոտերով, առվույտ են ցանում և թողնում են յերեք տարի: Այդ յերեք տարում առվույտը մոլախոտերին այնպես և ձնչում, վոր դբանից հետո հողամասն արդեն բավականին մաքրված է

լինում և հնարավոր և լինում մեծ հաջողությամբ նորից բամբակ ցանել: Մոլախոտերի դեմ հաջողությամբ կարելի յի պայքարել նաև ցանքաշրջանառության մեջ վիկ-վարսակի խառնուրդի ցանք ստցնելով և այլն:

Համարյա բոլոր ցանքաշրջանառություններն ել իրենց մեջ ունեն հացարույսերի մեկ կամ մի քանի դաշտ: Այդ դաշտերի մոլախոտերը վոչնչացնելու և խոնավություն պահպաննելու համար, անհրաժեշտ և բերքահավաքից հետո անմիջապես խողանավար անել:

Յեթե խոզանավարից հետո, ուշ աշնանը՝ այդ հոդերը վարչում են, ապա այդ գեղքում բազմամյա վեասակար մոլախոտերի արմատներն ու կոճղաբմատները համարյա ամբողջովին վոչնչանում են: Վարի ժամանակ հոդի յնքես հանված արմատները ձգման ցրտերի աղղիցության տակ վոչնչանում են:

Այս բոլորից յերեսում և, վոր ցանքաշրջանառության մեջ ճիշտ կերպով ընտրած բույսերի հաջորդականությունը մի ուժնունիթան և հոդի կուլտուրական մշակման և մոլախոտերի վոչնչացման ուղղությամբ:

Ցանքաշրջանառության կիրառման ժամանակ պետք և աշխատել կուլտուրական ցանքերի զարգացման համար ստեղծել լավագույն պայմաններ՝ սակայն անպալման պետք և նկատի ունենալ նաև տվյալ տնտեսության մեջ տարածված մոլախոտերի առանձնահատկությունները: Պետք և լավ ճանաչել մոլախոտերը, իմանալ նրանց վոչնչացնելու միջոցները և ցանքաշրջանառությունը կազմելիս՝ նկատի ունենալ վոչ միայն կուլտուրական ցույսերի մշակությունը, այլև մոլախոտերը վոչնչացնելու միջոցները:

#### 4. ՔԻՄԻԱՆ ԴԱՇՏԵՐԻ ԿԱՆԱԶ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Քիմիան—աստիճանաբար, բայց հաստատուն քայլերով մտնում և մոլախոտերի դեմ տարվող պայքարի միջոցների զինանոցը: Արտասահմանում, մոլախոտերի դեմ տարվող պայքարում, մեծ հաջողությամբ կիրառվում են մի շարք քիմիական միացություններ: Մեզ մոտ նույնպես, շնորհիվ մեր քիմիական արդյունաբերության արագ զարգացմանը, այդ միացությունների գործադրությունն աստիճանաբար սկսում ե լայն ծավալ ընդունել:

Առաջին անգամ այդ ուղղությամբ մեզ մոտ փորձեր արվեցին հյուսիս-արևմտյան յերկաթգծում, ցանկանալով

վոչնչացնել յերկաթղթի մեջ դարձացող մոլախոտերը Սակայն այլ բան և վոչնչացնել մոլախոտերը յերկաթուղու ճանապարհի վրա և միանգամայն այլ այդ նույնը կատարել զյուղատնտեսության մեջ։ Վերջին զեղքում մոլախոտերը պետք և այնպես վոչնչացնել, վոր հողը չթունափորիի, և հնարավոր լինի այդ հողում կուտուրական բույսեր մշակել Անա հենց այդ ել հանդիսանուած և մոլախոտաերի գիմ տարվող քիմիական պայքարի գործում նեղ տեղը Քիմիական միացությունները վորոշ ժամանակով թունավորում են հողը, դարձնելով այն յերկրագործության համար մի առ ժամանակ անպետք։

Այնուամենայնիվ վորոշ նյութեր հենց այժմ ել կարող են լայն կիրառում ստանալ Որինակ՝ կարտոֆիլի ցանքերում։ Նախ քան կարտոֆիլի ծիլերը գուրք գալը, մոլախոտերի վոչնչացման համար կիրառվել ե թթու ծծմբաթթվային նամրիումը։ Շատ հավանական և, վոր մոտ ապագայում մի շարք քիմիական միացություններ ձեռքի քաղհանի լուրջ մրցակիցները կրասնան։ Կան այնպիսի քիմիական նյութեր, վորոնք ուղղակի ազդում են հողի վրա և սպանում նրա մեջ յեղած արմատներն ու սերմերը։ Սակայն, վորոշ քիմիական նյութերից հետո, հողը 1—12 ամսվա ընթացքում յերկրագործության համար անպետք և դառնում։

Ընդհանրապես, քիմիական նյութերի գործադրման դեպքում պետք և շատ դղուշ լինել և անպայման դիկավարվել համապատասխան մասնագետների ցուցումներով։

### 5. ՍԵՊԸ ՍԵՊԸ ԴՐԻԽՄ ՏԱՆԵԼ

Մոլախոտերը պարագիսմերով վաճացնել

Զի՞ կարելի արդյոք գտնել այնպիսի միջատներ, ուունկեր կամ այլ պարագիտներ, վորոնք հենց իրենք վոչնչացնեն մոլախոտերը։ Այս հարցի վրա գիտնականները շատ մասնեցին և վերջի վերջո իսկապես գտան մոլախոտերը վոչնչացնելու կենսարանական միջոցները։ Այսինքն, գտան կենդանի որդանիզմներ, վորոնք կարող են մոլախոտերը վոչնչացնել։

Իրկուտսկի բույսերի պաշտպանության կայանում աշխատող մասնագետներից մեկը՝ Պոտապովան գտակ, վոր փուշի վրա զարգացող ժանգի սունկը արագությամբ վոչնչացնում և այդ սոսկալի մոլախոտը։ Վարակելով փուշն այդ սունկով, մենք նրան միանդամայն կվոչնչացնենք։ Բացի այդ, այդ սունկը սպոռներ։

տալու դարձմանալի հատկություն ունի (մանրագիտակային մտնր միամյա սերմեր), վորոնք տարածվում են հողի մեջ և վոչնչացնում են փշի արժատները:

Ժանդասունկով վարակված փշի 10—12 բռյաը կարող են տալ այնքան նյութ, վոր 22<sup>1/2</sup> հազար գրուշ վոչնչացնելու համար բավական կլինի: Մոլախոռուերի գեմ տարվող պայքարի կենաւարանական միջոցներն արտաստանում առաջցարի ավելի ու ավելի մեծ գործնական կիրառություն են ստանում:

Մեզ մոտ այդ մեթոդները դեռ գիտական մշակման և փորձի շրջանում են գտնվում: Անկասկած այդ բնագավառում կատարվող հայրաբերությունները կտնաչ վնասառությունների գեմ պայքարելու գործում հակայական հնարավորություններ են պահպառ:

#### IV. ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐԻ ԲՇԱԱՄՈՒՆ

Ստորև տալիս ենք Անդրկողկատում տարածված մի շաբք դիմավոր մոլախոռուերը—բամբակացան շրջանների մոլախոռուերը, թեյի, ծխախոտի և այլ տեխնիքական կուլտուրաների մոլախոռուերը և հացահատիկային ու բանջարանոցային կուլտուրաների մոլախոռուերը:

Դեռք են նկատի ունենալ, վոր մոլախոռուերը «կցված» չեն այս կամ այն կուլտուրային: Որինակ՝ բամբակացան շրջանների խիստ վնասակար արվանտակ (ցինոգոն, դակարիլոն) մոլախոռու հանգիպում և վոչ միայն բամբակացան շրջաններում:

Ծանօթանալով ստորև բերված մոլախոռուերի հետ, պետք ե ընտրել և լավ ուսումնասիրել այն մոլախոռուերը, վորոնք հանդիպում են տվյալ շրջանում:

#### 1. ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԵՐԻ ՄՈԼԱԽՈՏԵՐԸ

Դանդուրգան (բուսաբանական անունը—անդրոպոգոն, հալեբնողիս).—կտալամի շալապա (վրաց.):

Բավկականին տարածված ե Արարատյան վաշտերում, (հատկապիս վաղապատի շրջանում), մասմբ կա նաև Մեղրիում: Հանդիպում է Վրաստանի և Աղբբեշանի հորթավայրերում:

Հանգուրդանը՝ սուրդանի խոտի վայրի աղջականն ե և արտաքին տեսքով նրան շատ նման ե: Սուրդանկայից արքերվում ե նախ նրանով, վոր սուրդանկան միամյա բույս ե, սովորական վնշանեկ տրմատներով, մինչդեռ սա բազմամյա յի և ունի խոր դնացող

ու շատ կենսունակ կոճղարմատներ թացի այդ, նրա սերմնը՝ հակառակ սուզանկային, հեշտությամբ թափում են:

Դանդուրդանը պատկանում և հացազգիների ընտանիքին, բազմանում և և անընդուրդանով, և կոճղարմատներով, Մեր վորոշ շը ան-ներում զանդուրդանը բամբակի ցանքերի ամենասակալի մոլա-խուն և հանգիստնում: Դանդուրդանը բարձր և խռով բռւյս եւ:

Դանդուրդանի դթմ պայքարելը դժվար և և յերկար ժամանակ և պահանջում է Յեթի հողամասը շատ ուժեղ կերպով վարակված և զանդուրդանով, ապա այն մեկ տարի պետք և թողնել վորպես արոտատեղ, Դրանից հետո աշնանը պետք և խոր վարել և կոճղ-աբամաները հավաքել, Մյուս տարի այդ հողամասը պետք և թող-նել վորպես մաքուր ցել, աշնանը ցանել աշնանացան հացարույ-ներ, իսկ հաջորդ տարին արդեն կարելի յի ցանել բամբակ կամ այլ շաբաթաներկ կուլտուրաննը: Փայքարի լավ միջոց և նաև առ-ռանը, վորոշ ժամանակ, ջուր լճացնելը: Այդ գեղքում զան-դուրդանի կոճղարմատները ջրի տակ, ոդի պակասությունից, խեղ-դվում են, նեխում և վոչչանում են:

Ար վանտակ. (բուսաբանական անունը՝ ցենոդրոն դակտի-լոն), գերբառ (վրաց.):

Տարածված և ամբողջ Անդրկովկասում, հատկապես շատ կա-րամբակացան շրջաններում: Բազմամյա բռւյս և, նույնպես պատ-կանում և հացազգիների ընտանիքին: Կարող և աճել ամեն տե-սակի հողերում, բոլորովին չի վախենում վոչ շողից և վոչ յե-րաշտից: Սա նույնպես զանդուրդանի նման բազմանում և, դը-խավորապես, իր կոճղարմատների խիտ ցանցով: Այդ կոճղարմատ-ները, քաղհանից հետո (յերբ նրանք կտրվում են ու ընկնում հողի յերեսը) յերկար ժամանակ պահպանում են իրենց արմա-տակալերու ընդունակությունը:

Այս մոլախոտերի դեմ պայքարում են նույն ձեռվի, ինչպես և զանդուրդանի դեմ: Փուխը և թեթև հողերում կոճղարմատները հողից հանելու համար ցանկալի յի (այսուեղ վորտեղ այդ կա) գործ աճել Շառլի յոթ-թաթանի զապանակավոր կուլտիվատոր-ներ: Մանր, ամուր հողերում պետք և բազմախովի գութաններով վարել և հետքից մի քանի անգամ զանազան ուղղություններով փողչեր: Արվանտակի կոճղարմատները վոչ մի գեղքում չի կարե-լի թողնել զաշտում, անպայման պետք և հավաքել և դաշտից դուրս տանել կամ այցել և կամ տալ անասուններին:

Քաղցը ը-ը ի ան (բուսաբանական անունը՝ զմեցիթիզա գլա-

բա). հաճախ անվանում են՝ շիրին-բիան կյասնի-կեկի (թուրք.) —զգիր տկվիլա (վրաց.): Բուևնում և ամենուրեկ՝ Արաքսի և Թուռի հովիտներում և Անդքկովկասի այլ վայրերում: Առանձնապես լավ գարգանում ե փուխր, պարարա և մասամբ խոնավ հողերում:

Քաղցր-բիանը բաղմամյա բույս է, պատկանում և թիթեռնածղկավորների ընտանիքին, տալիս և հասա, ճյուղավորված արմատ, վոր հողի մեջ զնում և մինչև 1 մետր խորությամբ: Սրա արմատը բժշկության մեջ դորձաղրվում և վորպիս փափկացնող և խորխարեր միջոց: Ազրբեջանում սրա արմատները մեծ չափով հավաքում են և արտահանում արտասահման: Անտառապղուրկ շրջաններում քաղցր-բիանի արմատները գործ են աճում վորպիս վառելիք, շատ վառ բոց ունի և մեծ ջերմություն: Բամբակի դաշտերում քաղցր-բիանը հանդիպում և բավականին հաճախ: Ըստ սովորակար մոլախոս և:

Սրա զիմ պայքարելու համար արմատները պետք է ճյուղավորություններով հողից հանել և վոչնչացնել: Բացի այդ, անհրաժեշտ և նաև ամուռը, նախքան սերմակալելը, ցողունները հնձել, վրապեսզի սերմերը չհասունանան և չտարածվեն:

Դառն ախոտ: (բուսաբանական անունը՝ ակրոպիչու պիկրիս):

Ամենավասակար մոլախոտերից մեկն և Խ. Հայոսաւոնում գլխավորապես լինում և Արտարայան գաշտերում, շատ տարածված և Ազրբեջանում՝ հատկապես Մուղանի տափաստանում: Այս մոլախոտը լավ զարդանում և հարթավայրերում, շատ վախենում և ազուաններից, նույնիսկ քիչ աղային հողերում արդեն չի դարձանում:

Իր ուժեղ արմատային սիստեմի շնորհիվ, դաշտերից դուրս և մղում համարյա բոլոր մյուս բույսերին: Բոլորովին չի վախենում շոգից և յերաշտից, և շատ կարճ ժամանակում բավականին խոր շերտով չորացնում և հողամասը: Դառնախոտի արմատները աճում են շատ մեծ արագությամբ, կազմելով 5—6 մետր տրամագիծ ունեցող շուրջանակներ:

Պայքարելու համար պետք է այդ շուրջանակները փորել ամբողջ խորությամբ և արմատները հանել: Ցեղե հնարավորություն կա, ապա այդ շուրջանակները կարելի յե վոչնչացնել նաև քիմիական նյութերով—ծծմբածխածնով կամ նատրիումի քլորատով:

Հավակատար կամ ամարանտ (բուսաբանական անունը՝ ամարանտուս բիտրոֆլիքուս), սիրիւմիարդ, սուլֆիխուրան (թուրքերեն), ջիլալա (վրացերեն):

Հավակատարն ամենատարածված մոլախոտերից մեեն և Մեզ մոտ մեծ չափով տարածված և Արարատյան դաշտում, մասամբ լինում և նաև այլ շրջաններում: Բամբակի ցանքերից բացի, մոլախոտում և նաև մի շարք այլ կուլտուրաների, բանֆարանոցների, աշնանացան ու գարնանացան հացարույսերի և այլն դաշտերը:

Պայքարի հիմնական միջոցներն են՝ աշնան խոր վաբը, շաբաներկ կուլտուրաների միջարքերի կանոնավոր մշակումը (համեստապես կտրող գործիքներով), իր ժամանակին կատարված գարնանացանքը և այլն:

Ինչքան ուշ և կատարվում բամբակի ցանքը, այնքան նաև ավելի յի առուժում հավակատարից:

Ու դատի ու շ.՝ (բուսաբանական անունը՝ ալհապի կամելորում), Դավաթիքյան, յակ թիքյան (թուրքերեն):

Բավկականին տարածված մոլախոտ և, պիտակորապես բուսնում և տափաստաններում, վարակում և բամբակի թե ջրովի և թե անջրդի ցանքերը: Ունի փոքրիկ՝ փշոտ թփեր և շատ խորը գնացող արմատներ: Զմեռը սրա վերերկրյա մասերը ցրտահարվում, վոչնչանում են, սակայն արմատի մոտի բողբոջներից հաջորդ տարին նոր ցողուններ են գուրս գալիս Չնայած վշերին, ուղտերը և հշերը մեծ ախորժակով ուտում են: Շնորհիվ իր շատ խոր գնացող արմատների, դիմանում և անգամ ամենաուժեղ յերաշտներին:

Այս մոլախոտի դեմ պայքարելու համար պետք է հողը շատ խոր վարել և զսպանակավոր կամ այլ փոցիներով հավաքել ամբողջ կտրված արմատները:

## 2. ՆԽԱԽՈՏԻ, ԹԵՅԻ ՑԵՎ ՑԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՅԼ ԿՈՒԽՈՒՐԱՆԵՐԻ ՍՈՒԱԽՈՏԵՐԸ

Զար խոտ կամ պտեր.՝ (բուսաբանական անունը՝ պտերիս ակվիլինա), գմիմբա, շաղունա (վրաց.), արբաս (արխապերեն), ցիլ (սսետիներեն), բեշտ—դատլա (թուրքերեն):

Արխազիայի, Աչարիստանի, Արիկմատյան Վրաստանի, ինչպես և Լենքորանի շրջանի (Աղբքիջան) ծխախոտի, թեյի և տեխնիկական այլ կուլտուրաների դաշտերի ամենասոսկալի մոլախոտերից են:

Պտերի ուժեղ արմատներից չափազանց արագ դուրս են գալիս տերեթվները, վորոնք արագ աճելով՝ խեղում են կուլտուրական բույսերը, կանգնեցնելով՝ նրանց աճումը: Կոճղարմատները

մոտ 30 սմ. խորությամբ՝ մանելով հողի մեջ, հողի մակերևությունը գուգահեռ, խիտ ցանց են կազմում:

Այս մոլախխոտերի դեմ պայքարելը գժվար ե, բայց միանգամայն հնարավոր հաճախակի քաղհանող, կոճղարմատների արմատահան անելը 2—3 տարի շարունակ, յիգիպտացորեն ցանելը—ահա այն միջոցները, վորոնք շատ մեծ չեն չափով թուլացնում են պտերի արմատային սիստեմը: Այնտեղ, վորտեղ այդ հնարավոր ե, շատ լավ ե պտերով վարակրած հողամասը լացնել: Այս մոլախխոտը, նույնիսկ շատ կարճ ժամանակ, ջրի տակ չի դիմանում:

Ճըա գա խոտ.—(բուսաբանական անունն ե՝ որսրանին վորն ունի մի քանի տեսակները), կելապտարա (վրացերեն):

Ծխախոտի ամենավտանգավոր մոլախխոտերից մեկն ե, յերշենքն պատահում ե նաև արևածաղկի և յերեքնութիւն ցանքերում: Ճըագախոտը պարագիտաներով զարգանում ե այլ բույսերի արագատների վրա: Մրա սերմերը շատ մանր են և գտնվում հատուկ տուփիկների մեջ: Մեկ բույսը կարող է մինչև 80 հազար սերմ տալ, վորոնք քամու հետ հեշտությամբ տարածվում են և վարակում հողը: Խսկ ճըագախոտի այդպիսի բույսեր՝ ծխախոտի մեկ թփի վրա կամ արևածաղկի վրա: Կարող են լինել մինչև 100 հատ:

Ճըագախոտի կյանքն ու առանձնահատկությունները գիտությունը գեռս քիչ ե ուսումնասիրել: Պայքարի միջոցներն ընդհանուր են, ինչպես մյուս մոլախխոտերի դեմ—հողը լավ վարել, թույլ չտալ ճըագախոտին սերմակալել, ճըագախոտով վարակված դաշտում 3—4 տարի մշակել այլ կուլտուրաներ: Սերմացուն խնամքով զտել, իսկ արևածաղկի սերմացուն պետք ե ախտահանել 2—5 տոկոսանի պղնձարջուսպով, թողնելով լուծույթի մեջ 5 բուպե, կամ 10 բուպե պահել 60° տաք ջրի մեջ: Ցանկալի յե մշակել կուլտուրական բույսերի ճըագախոտու - գիմացկուն սելեկցիոն սորտեր:

Սուլուֆ կամ հավակորեկ.—(բուսաբանական անունը՝ պանիկում կրու գալիս): Ուրշխա (վրացերեն), սուլուֆ, դարբի, կեխերի (թուրքերեն):

Շատ տարածված ու մնասակար մոլախոտ ե, բուսնում ե խոնավ և ջրովի շրջաններում: Խայաստանում բավականաչափ տարածված ե: Բընձի ցանքերին հատուկ մոլախոտ ե, սակայն մոտ լինում ե նաև բամբակի ցանքերում, բավականին ուժեւ

հերապով միտում և ծխախոտին, թեյի մատղաշ սածիրներին և այլն:

Իր արտաքինով շատ նման և բընձի և գրա համար ել բընձի գաղափը սուլուֆից քաղհանելը չափազանց զժվար եւ Տարածված և նաև սանջարանոցներում, վորսեղ ուժեղ կերպով ձեռում և ուշ ծլու բանջարեղիններին ներին առափճանի կենսունակ բույս ե, քաղհանելուց հետո, յիթե զցեն դաշտում, ապա շատ հեղուոթյամբ նորից կարմատակալիի Սուլուֆի սերմերը հաճախ մեծ քանակությամբ հանդիպում են բընձի, իսկ յերեմն նաև ցերենի մեջ:

Պայքարելու համար անհրաժեշտ եւ 1) բընձի և ցորենի սերմացուն խնամքով դտել, 2) ծխախոտի և այլ շարքահերկ կուլտուրաների ցանքերը միշտ իր ժամանակին քաղհանել, վոչ մի գեղագում թույլ չտալով, վոր սուլուֆի սերմերը հասունանան:

Մատնուկ. — (ըուսարանական անունը՝ պատճիկում սանդպինալի, կամ գիգիտարիա սանդպինալիս), մցխետիս ուեխի (վրացերեն):

Այս մոլախոտը գլխավորապես հանդիպում և Անդրկովկասի արևմայան մասերում: Արևմայան Վրաստանում վնասում և տեխոնիքական կուլտուրաներին (ծխախոտ, լեթերատու բույսեր և այլն); Անասունները մեծ ախորժակով ուտում են այս բույսի ցողունները:

Այս մոլախոտի գեմ պայքարի միջոցները համարյա նույնն են, իսկ վոր սուլուֆի գեմ:

### 3. ՀԱՅԱՀԱՏԻԿԱՑԻՆ ԹԵՎԼ ԲԱՆՉԱՐՄԱՆՈՑԱՑԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄՈԼԱԽՈՏԵՐԸ

Խողանուկ. — մեզ մոտ տարածված են սրա մի քանի տեսակները, (ըուսարանական անունը՝ 1) սետարիա գլառկա, 2) սետարիա վերիգիս և 3) սետարիա վերտիցիլատա: Այս յերբորդ տեսակն ունի կաչող խողաններ, վորի համար ել նա կոչվում է կաչուկ, մինչեւ առաջին յերկուսը չունեն: Թագրիշանա (գրտցերեն), տակլակի (թուրքերեն):

Շատ տորածված և վնասակար մոլախոտ ե, լինում ե թե հացահատիկների ցանքերում և թե մանավանդ բանջարանոցներում ու բամբակի գաշտերում: Տարածված և ամբողջ Անդրկովկասում: չափազանց շատ կա մեր բամբակացան շրջաններում: Կորենի տիպիկ մոլախոտ ե ու ամենից շատ նրան և վարակում: Խոզա-

նոռկի արմատային ցանցը հողի մեջ գնում և մինչև 11<sup>1/2</sup> մետր խորությամբ և շտա ուժեղ կերպով չորացնում և ուժապատ և առնում հողը, Արախողանները հեշտությամբ կոտրտվում են և պիրտվորում անասունների բերանը, Խողանուկը կոշտացնում և խոտը և դցում նրա գորակը, Խողանուկն ամենից շատ փարակում և այլելի ուշ ցանվող կուլտուրաներին, վորովինետե ինքը բավականին ուշ և ծլում և լուի զարգանում և ամառվա յերկրորդ կիսին Հատկապես ուժեղ զարգանում և հացարույսների բերքահամարքից հետո, մանավանդ, յիթե այդ ժամանակ անձրևներ շատ են գալիս:

Խողանուկի կպչող տեսակը մեծ վնաս և տալիս բամբակին, կպչում և նրա բացված կնդուղներին և զցում բամբակի գորակը, վորովինետե սրա հասկակալման շրջանը մեծ մասամբ դուրսդիպում և բամբակի կնդուղների բացվելուն:

Խողանուկի գեմ պայցքարելու ամենալավ միջոցը խողանավարն եւ հացարույսների բերքահամարքից հետ: Այս զեպքում կը պահանջում չի կարողանում սերմ տալ և արմատային սիստեմն ել շատ մեծ չափով թուլանում եւ:

Պոչուկ կամ խրփուկ.— (բուսաբանական անունը՝ ովկինա ֆատոււա), գարիալի շվրիա (վը ացերեն), գիլիմիտ (թուրքերեն):

Խիստ վնասակար մոլախոտ եւ, տարածված և ամբողջ Անդրսկովկասում: Խ. Հայաստանում մեծ չափերով տարածված երենտային շրջաններում (Լինինական, Ախուտա, Ն. Բայազետ, Համբամլու և այլն): Ամենից շատ վարակում և գարնանացան հացարույսներին, թեպետ և յերբեմն բավականին չափով լինում են նաև աշնանացանների մեջ: Կան պոչուկի մի քանի տեսակները:

Պոչուկի սերմերը բավականին թեթև են և քամու միջոցով հեշտությամբ տարածվում են: Անտառունների ստամոքսի մեջ չեն մարսվում, այդ պատճառով ել թարմ գոմաղբով պարարտացնելիս՝ կարելի յե դաշտը պոչուկով վարակել: Պոչուկը կուլտուրական վարսակի վայրի տեսակն եւ, և նրաբից տարբերվում է իր սերմերի հեշտ թափվելու ընդունակությամբ: Պոչուկը ևս կպչուկի նման շատ խոր գնացող արմատային ցանց ունի և չորացնում և հողը:

Պոչուկի սերմերն սկսում են հասնել ավելի շուտ, քան կուլտուրական բույսերինը և մինչև հացարույսների բերքահամարքն արդեն նրա սերմերի վորոշ մասը թափված և լինում ու վարակում հողը: Սերմերի վորոշ մասը հասնում են հացարույսների:

հետ միասին, և վորովհետև նրանք իրենց մեծությամբ հաւաքյա հավասար են հացաբույսերի հատիկներին, ուստի հեշտությամբ անցնում են կալսող մեքենայի մաղերի միջից և վարակում են հացահատիկները։

Յեթե պոչուկով վարակված հողում մի քանի տարի շարունակ ցորեն ցանվի, ապա պոչուկն այնքան կզարգանա, վոր մի քանի տարուց հետո այլևս վոչ մի կերպ հնարավոր չի լինի այդ հողում ցորեն մշակնէ։

Պոչուկի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է նաև կառաջ և սերմացուն տրիյերներով զտել և ապա կանոնավոր ցանքաշրջան տուություն կիրառել, մտցնելով նրա մեջ շարքահերկ կուլտուրաներ, վորտեղ ամրող ամառ անընդհատ քաղհանի միջոցով կվոչնչացվեն պոչուկի յերեացող բոլոր ծիլերը։

Պատառուկ.— (բուսաբան կան անունը՝ կոնովովուլուս արվենցիա), խվարտկա (վրացերեն), լեյլիֆիր, թոռուշան թոփուզ (թուրք):

Բազմամյա բույս ե, փաթաթվող ցողուններով։ Մեծ չափերով տարածված ե ամրող Անդրկովկասում։ Խ. Հայաստանում կա թե դաշտավայրում, թե նախալեռնային և թե լեռնային շրջաններում։ Շատ վնասակար մոլախոտ ե, ուժեղ կերպով ուժասպառ և անում հողը։ Պատառուկը փաթաթվում ե կուլտուրական բույսերին, ծոռում այլանդակում և նրանց, իսկ շատ բույսերի միանգամայն վոչնչացնում են Հացաբույսերի ցողուններին փաթաթվելով՝ խանդարում նրանց բերքահավաքը և դժվարացնում ե խուրձերի չորացումը։ Պատառուկի արմատներն ուժեղ կերպով աճում ու տարրածվում են դեպի բոլոր կողմերը, առաջացնում են մեծ քանակությամբ հավելյալ բողբոջներ, վորոնցից գուրս են գալիս նոր ցողուններ։ Այս պատճառով ել պատառուկի քաղհանը վոչ միայն անողուտ ե, այլև վնասակար, վորովհետև նպաստում ե նոր արմատային բողբոջների և ցողունների առաջանալուն։

Պատառուկի դեմ պայքարելու համար հողը վարելու ժամանակ բոլոր արմատները պետք ե խնամքով հավաքել։ Բացի այդ, պետք ե վարել ուշ աշնանը և այդպես թողնել, ձմեռվա ընթացքում ցրտի ազդեցության տակ արմատները սառչում ե վոչնչանում են։

Վորոմն կամ գժվակ.— Կոչվում ե նաև՝ գիծ հաց, թմրեցուցիչ վորոմ և այլն, (բուսաբանական անունը՝ լոլիում

տեմուրինստում), մատրոքիլա, գվարձլա (վրացերեն), դալիջակամիկ (թուրքերեն):

Նատ վնասակար մոլախոտ ե, հանգիպում և Անդրկովկասի համարյա բոլոր շրջաններում, հացարուցյարի ցանքերի մեջ՝ Վորոմիկ սերմերը յերկար տարբիներ կարող են հողում մնալ առանց ծելսու և առանց կորցնելու իրենց ծլունակությունը և խոնավ տարիներում անսպասելի կերպով միանգամից հսկայական քանակությամբ ծելս և ամբողջ դաշտը ծածկել վրաբնով:

Վորոմիկ սերմերը խառնվելով հացահատիկների հետ, այս դարձնում են մարզու առողջության համար վտանգավոր: Այդպիսի հոցահատիկից պատրաստված հացն տուաջացնում և գլխացավ, քնկոտություն և ուժերի անկում: Վորոմիկ սերմերը շշեցնող հատկություն ունեն, վորի պատճառով ել կոչվում և գիծ հաց:

Վորոմիկ դեմ պայքարում են այնպես, ինչպես վարսակի դեմ, այն եւ սերմերի զտում, նորմալ ցանքաշրջանառության կիրառում և այլն:

Փուշ, կանգառ.—(բուսաբանական անունը՝ ցիրզիում արվենզե, սոնխուս արվենզիս, ցիրզիում ինկանում և այլն):

Խիստ վնասակար բազմամյա մոլախոտ ե. կան մի քանի տեսակները, վորոնք իրարից շատ քիչ են տարրերվում, լինում են և վարդագույն ծաղիկներով: Դրանց մեծամասությունը կոչվում ե փուշ:

Թերթին արի, նարիսեկալի (վրացերեն), շամպերիլույուկ (թուրքերեն):

Տարածված ե ամբողջ Անդրկովկասում, հատկապես՝ Հայաստանում, Աղքարեցանում և Կախիթիայում:

Բազմամյա մոլախոտ ե՝ ծածկված ե փշերով, արմատները հաճախ հասնում են մինչև 6 մետր խորության: Բազմանում ե և արմատներով, և սերմերով, արագությամբ գրավելով նորանոր հողեր:

Պարքարը դրա դեմ շատ լժվար ե, պետք ե համառորեն քաղանել բոլոր նոր յերեացող բույսերը, թույլ չտալով նրանց մեծանալ: Պետք ե կիրառել այնպիսի ցանքաշրջանառություն, վորի մեջ կան բազմամյա խոտաբույսեր կամ շարքահերկ կուլտուրաներ:

4. ԱԶԱՏՎԵՆՔ «ՆԵՐԾՈՒԾՎԱԴՐ» ՄՈՒԱԽՈՏԵՐԻՑ

Ի՞նչ բան ե հնդկայեղեգնի խոտը — Այս հարցին չեն կարող պատասխանել նույնիսկ մասնագետներից շատերը Այդ մոլախոտը մեզ մոտ յեկել ե գաղտագողի՝ թեյի ներմուծվող սերմերի հետ՝ ձապոնիայից և Ցիյլոնից Դեռ 1օ տարի չկա, ինչ հնդկայեղենգնը մեր թեյագործական ցրջաններում — Արխաղիայում, Աջարիստանում և այլն—սկսել ե տարածվել վորպիս մոլախոտ։ Անհրաժեշտ եր բերած թեյի սերմերն անմիջապես բնամքով զաել, իսկ այն հողը, վորի մեջ բերվել ելին այդ սերմերը, պետք եր թունավորել և խորը թաղվեր։ Սակայն այդպիս չի արվել և ազգութիւնիկական այդ անդրագիտության պատճառով՝ մեր թեյի դաշտերն այժմ պարզեատրվել են մի նոր, սոսկալի մոլախոտով։ Հնդկայեղեգնի խոտը պատճեմ ե ամբողջ դաշտերը, մտնում և թեյի թիկերի մեջ, նրանց հյուսում և իր ցողունների ցանցով, թույլ չի տալիս թեյին զարգանալ և խանգարում ե բերքահավաքը։

Հնդկայեղեգնի խոտը բաղմանում ե սերմերով, վորոնք ուշ աշնանը թափվում են։

Պայքարը այս մոլախոտի դեմ այնքան ել դժվար չե. պետք ելավ քաղհանել և բոլոր բույսերը հավաքել ու դաշտից անպայման հեռացնել, վորովինետև նրանք շատ կենսունակ են և հատուկ ուշադրություն պետք ե դարձնել, վոր թեյի նոր պլանտացիաներում այս մոլախոտը չտարածվիլու։

Մեր սուբստրուպիկ ցրջանների համար այս մոլախոտն այնքան նոր ե, վոր աղգարնակչությունը դեռ անուն չի դրել։ Բուսաբանական անունն ե՝ պոլինիաս-իմբերիա։

Արդյոք ձապոնիայից, Զինաստանից ու Հնդկաստանից, միայն հնդկայեղեգնի խոտն ե, վոր բերել ենք։

Չայ-Գրուղիան, Սուխումի և Բաթումի բուսաբանական այգիները, ինչպես նաև փորձնական կայանները մեծ քանակությամբ սահագան սուբստրուպիկ կուլտուրաների սերմեր ու տնկիներ են ներմուծում, սակայն նրանք շատ քիչ ուշադրություն են դարձնում ընդունակ սերմերն ու հողը, մոլախոտերն ու վնասատուները, մեղ համար անվաս դարձնելու կանոնների կիրառմանը։

Ա. Կ. Մակաշվիլու կատարած հատուկ հետազոտությունից պարզվել ե, վոր արտասահմանյան սերմերի ու տնկիների հետ միասին մենք ձապոնիայից, Զինաստանից ու Հնդկաստանից

ներմուծել ենք նաև մոտ 50 նոր տեսակի սուբտրոպիկ վնասակար մոլախոտեր։ Այդ բոլոր մոլախոտերից, այս կարճ ժամանակամիջոցում, ամենից շատ զարգացել ու տարածվել է հնդկայի գեղնի խոտը, վորը թեղի կուլտուրայի համար չարիք և զարձել։ «Ներմուծված» մնացած մոլախոտերը (բռնաբանական անուններ՝ գուտուինիա, պասպալում և այլն, հատկապես վայրի հնդկացորեններ), առայժմ դեռ չեն տարածվել։ Նրանք այսոր Աջարիստանում, Գորիսում, Մինզրելիայում և Արքազիայում տարածված են դեռ շատ փոքրիկ ոջախներով, սակայն յեթե մենք նրանց հենց անմիջապես չվոչնչացնենք, ապա վաղը կարող են սոսկալի վտանգ հանդիսանալ մեր սուբտրոպիկ կուլտուրաների համար։

Աջարիստանի, Արքազիայի և Արեմսյան Վրաստանի կոմյերիտության համար պատվի դործ պիտի լինի՝ պահպանել յենթաշշի սուբտրոպիկ կուլտուրաներն այդ «ինտերվենտներից» — մոլախոտերից։ Դեռևս հնարագոր և ամբողջովին վոչնչացնել այդ մոլախոտերը. զրա համար կոմյերիտական կազմակերպություններ պետք և կապվեն տեղի գիտական ու փորձնական կազմակերպությունների հետ, ճանաչեն այդ ստարերկրյա մոլախոտերը, ուսումնասիրեն նրանց դեմ ատրպելիք պայքարը և վորպես նոր վնասատուների դեմ տարվող պայքար, այդ մոլախոտերը վոչնչացնելու հարցը, վորպես կարևորագույն գործնական խնդիր, մտցնեն հակամոլախոտային արշավի ծրագրի մեջ։

### ԴԵՊԻ ԱՐՑԱՎԻ ԱՎԱՆԴԱՐԴ

ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ԴԻՏԱԿԱԼՆԵՐ-ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԿԱՅԱՆՆԵՐ, ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ, ԱԳՐՈՏԵԽ ԽՄԲԱԿՆԵՐ, ՄԱՍՈՒՀ,

Շրջանային կոմյերիտական շատ կազմակերպություններ կան, վորոնք դեռ չեն լծվել մոլախոտերի դեմ տարվող համամիութենական արշավին։ Մի շարք շրջկոմիների դեկավարներ այդ արշավին նայում են, վորպես մի ավելորդ, վոչ պարտադիր կամպանիայի։

Ի՞նչպես չկա վհչ մի շրջան առանց մոլախոտերի, այնպես ել հակամոլախոտային արշավից գուրս չպետք և լինի վհչ մի կոմյերիտական կազմակերպություն։

Ի՞նչպես լծվել արշավին, ի՞նչպես գործնականորեն կազմակերպել այն։

Երջկոմների, ըջիշների, բարձր բերքի դիտակալների, զյուղատնաւ կայանների և ագրոտեխնիկայի խմբակների առաջին գործն են քննության առնել և յուրաքանչյուր կոմյերիտականի ու յերիտասարդ կոլխոզների հասցնել ակոմսումովայա Պրավդաց-ի 1933 թ. հունվարի 10-ի համարում տպված «Կոմսոմոլակայա Պրավդաց-ի» հունվարի 26-ի համարում տպված «Կոմսոմոլակայա Պրավդաց-ի» և դիտական աշխատավորների դիմումը («Պայքար դաշտերի թափառության վերաբերյալ»):

Այս դիմումը յերկար տարիներ հակամուախուային կոմյերիտական արշավի համար կմնա վորպես ուղեգիր:

Երջկոմի բյուրոյում, ըջիշներում, խմբակներում և այլն՝ քննելով այդ դիմումը, պետք եւ այն վհչ թե «ընդունել ի գիտություն», այլ մարտական գործնական ձեռնարկութներով ավելի ամրապնդել տվյալ շրջանի, կոլտնտեսության, խորհանտեսության և գյուղի մոլախոտերի վոչնչացման աշխատանքները:

Կոմյերիտական շրջանային շրջանային գործիքները և բջիջները պետք եւ սերտ կապ հաստատեն շրջնողբաժինների, մասնագետների ու տեղական թերթի հետ և կոմյերիտմիության շրջանային կոմիտեյին կամ թերթին կից կազմակերպին մոլախոտերի դեմ արշավելու շրջանային շտաբ:

Երջանային կոմիտեն կամ շտաբը, մասնագետների ակտիվ ուղնությամբ կաղմում եւ արշավի շրջանային ողանը, Պլանում պետք եւ կոնկրետ ցույց տալ, թե վորոնք են տվյալ շրջանի ամենավասարակար մոլախոտնը, ինչպես և գործ ժամկետներին պիտի պայքարել նրանց գեմ:

Պլանի մեջ պետք եւ մացնել ամբողջ տարվա ընթացքում կատարվելիք աղքութեխնիկական բոլոր ձեռնարկութները (ուշագնավար, հողի մշակումը գարնանցանից առաջ, կոճղարմատների հանելն ու հավաքելը, վաղ ցել, ցելերի հաճախակի կուլտիւրացիա, քաղցան, խոզանի այրելը և այլն):

Տարեկան պլանի հիման վրա պետք եւ կազմեն գյուղատնտեսական առանձին սեղունների արշավի պլանները Ռըինակ՝ գարնանցանցանի նախապատրաստման ողանը, ցել անելու և մշակման կամպանիայի ժամանակաշրջանի պլանը, աշնանային գյուղատրնտեսական աշխատանքների պլանը և այլն:

Երջկոմների ամենակարենը խնդիրներից են ջանար, վոր շրջնողբաժինները կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների համար կազմեն մոլախոտերի դեմ պայքարելու նույնպիսի պլան,

վոր հողբաժնի պլանը սերտ կերպով կտպված լինի Կոմյերիտ-միունիյան պլանի հետ:

Երջկոմները կտրող են և պետք և արշավի լավ կազմակերպում էր կոփեն արշավի հարյուրավոր ու հաղարավոր յերիտասարդ հարգածայիններ, կուլտուրական յերկրագործության և նոտուղիաստներ:

Արշավը կազմակերպել և պլավորել, նշանակում և բջիջների, բարձր բերքի դիտակալների, խմբակների, կունտեսային բրիգադների, առանձին կոմյերիտականների մնջ բարբեկլ մոլախոտերի գեմ լույսույցն ձեռվ պայքարելու մրցությունը:

Պետք և հիշել, վոր դյուդատնտեսության կենտրոնական և պիտավոր խնդիրը հանդիսանում և բերքատվության բարձրացումը: Երջկոմներն արշավի ընթացքի զեկավարությունը վոչ մի բուակ չպիտի բաց թողնեն իրենց ձեռքից: Արշավի իսկական կազմակերպիչ կարող և համարվել միտյան այն շրջկոմը, վոր միշտ մրցման հաշվառում և կտարում, վոր դիտի թի մոլախոտերի դեմտարվող պայքարում վճռ բջիջն և առաջից գնում և վճռ հետ մնում: Արշավի հարգածայինները և առաջավոր բջիջները պետք և սիստեմատիկաբար պարզմատրին, նրանց փորձը պետք և մասսայականացնել և տալ կազմակերպության հետ մնացող ողակներին: Թե՛ շրջանում և թե՛ տեղական թերթում արշավի հարգածայինների և գործադիքների համար պետք և կտրմիր ու սետախակ սահմաննել:

Վերջապես սոցմքումը պետք և ծավակել նաև առանձին շրջանների միջև: Այնուեղ, վորտեղ արշավը դեռ չի ծավալված, պետք և կունտեսային յերիտասարդության շրջանային առաջիկա հավաքն ուղարկողներ հակամոլախոտային արշավի խնդիրները լուծելու համար: Տեղերում մոլախոտերի գեմ տարվող աշխատանքների ծանրության կենտրոնը պետք և տեղափոխել բրիգադները, աղբոտեխն խմբակները և այլն:

Երջկոմների հիմնական խնդիրն և այնպես անել, վոր տեղերում կուսրջիջները և առանձնապես մասնագետաները սիստեմատիկ ոգնություն ցույց տան կոմյերիտական բջիջներին, բարձր բերքի դիտակալներին ու խմբակներին՝ հակամոլախոտային արշավը հաջող տանելու համար:

Դյանջայի, Արխագիայի և այլ շրջանների փորձը ցույց է տալիս, վոր պյուղում արդ դիտակալները քայլայվում և լուծվում են, յեթե նրանք թողնված են իրենց բաղդին, յեթե նրանց չի ող-

նում աեղական ագրոնոմը, յեթե կուսրջիջը, կոմյերիտմիությունը չի ոգնում դիտակալության աշխատանքներում:

Տարեկան մոտ և անդամ պետք ե բարձր բերքի դիտակալ-ների հովաք հրավիրել (նախ քան ցանքը, նախ քան մշտական կամպանիան, նախ քան բերքահավաքի ու մթերժան կամպանիան և նախ քան աշխատային աշխատանքներն սկսելը): Այդ հովաքներում անպայման պետք ե դրվե հակամոլախոտային արշավի ընթացքի խնդիրը, պետք ե ամփոփվեն անցած շըջանի արդյունքները, հայտաբերվեն թերությունները և նշվեն առաջիկ շըջանի հիմնական խնդիրները:

Յուրաքանչյուր շըջկոմ պետք ե հատուկ փոնդ կազմակերպի՝ պարզեցած համար մոլախոտերի գեմ տարվող պայքարում աչքի ընկնողներին, ազրոտեխնիկայի հարվածայիններին:

Ծիշտ այնպես, ինչպես շըջկոմները, կոլանտեսությունների, խորհանտեսությունների և գյուղերի կոմյերիտական ըջիջները, նախ և առաջ պիտի ուսումնասիրեն «Կոմմոմոլուսկայա Պրակդա»-ի գիմումը և զրա հիման վրա յել կաղմեն հակամոլախոտային իրենց արշավի տարեկան և ըստ գյուղատնտեսական առանձին սեղոնների կամպանիաների պլանը:

Բջիջը պետք ե ամեն կերպ աշխատի, վոր կոլանտեսության վարչությունը, խորհանտեսության գիրեհցիքան և զյուղիսորոնուրդնուննենան մոլախոտերի գեմ պայքարելու իրենց կոնկրետ ծրագրերը, և վոր այդ ծրագրերն իսկապես իրազործվեն (կոնկրետ կերպով ցույց տալ վորտեղի, յերբ և քանի հեկտար պետք ե վարել, մաքրել կոնդարմատներից, յերբ և քանի հեկտարի վրապետք ե մոլախոտերն այրել, քանի հեկտար պետք ե պարարտացնել, յերբ, ինչմով և այլն):

Մոլախոտերը վոչչացնելու համար բջիջն ու իր բյուրոն պետք ե կազմակերպեն սոցմբցում և հարվածայնություն:

Գյուղում հատուկ շտաբ ստեղծելու կարիք չկա, բջիջի բյուրոն փաստորեն պիտի հանդիսանա այդպիսի շտաբ: Ամբողջ կոլտնտեսային մասսայի (թե հասակավոր և թե յերիտասարդ), ինչպես նաև աշխատավոր մենատնտեսների մեջ պետք ե լայն բացատրական աշխատանք տանել, մոլախոտերի գեմ տարվող արշավի խնդիրները և նրա քաղաքական ու տնտեսական նշանակությունը բացատրելու համար: Առանձին բրիգադների, կոմյերիտական խմբերի, ինչպես նաև առանձին անհատների միջև պետք ե լայն կերպով ծավալել սոցմբցումը: Բջիջի բյուրոն միշտ պետք

և հայվի առնի, առաջավորներին՝ պարզեատքելու և հետ մնացող-  
ներին՝ հարվածելու ու առաջ մղելու համար:

Բայց ամբողջովին պետք է մրցման մեջ մտնի ուրիշ բջիջ-  
ների հետ: Հակամոյախոսային արշավիր կազմակերպման խնդրում  
կոմյերիտական բջիջների հիմնական գերն եւ կազմակերպել բար-  
ձըր բերքի դիտակալներ և այնպես զեկավարել, վոր նրանք աշ-  
խատեն մշտապես ու բերքատվության բարձրացման խնդրում  
դառնան Կոմյերիտմիության աշխատանքի ամենակարևոր ողակ-  
ներից մեկը:

Բարձր բերքի դիտակալներ Անդրեկովկասում կաղ-  
մակերպվել են 1932 թ. գարնանը, սակայն դեռ շատ շրջաններում  
նրանք բացակայում են: Դիտակալների աշխատանքներին ամե-  
նամեծ ուշադրություն դրանում են Գյանջայի, Սալյանի, Զուդ-  
գիդիի և Արխազիայի կոմյերիտական կազմակերպությունները:  
Շատ շրջաններում թեև դիտակալներ կազմակերպված են, բայց  
շրջանները նրանց աշխատանքները չեն զեկավարել և պարզ եւ,  
վոր այդպես ինքնառուի թաղնված դիտակալները հեշտությամբ  
կազմալուծվում ու քայլացնում են:

Բարձր բերքի դիտակալները կամ դիտակալային խմբերը  
փոքր բջիջներում հետեւյալ կերպ են կազմվում: յուրաքանչյուր բրի-  
գագ առաջավոր հարվածայիններից մեկին առանձնացնում է վոր-  
պես բարձր բերքի դիտակալ: Այդ բոլոր բրիգադներից առանձ-  
նացված դիտակալները միասին կազմում են բարձր բերքի դիտա-  
կալային խմբակ կամ դիտակալային բրիգադա: Յուրաքանչյուր  
բրիգադայի մեծ բջիջներում կազմում են առանձին դիտային խմբ-  
ակներ, յուրաքանչյուր ողակից մեկական հոդի:

Տերքի բորձրացման համար մղվող պայքարում, կորուստ-  
ներից ու կուլակային հափշատակումներից բերքը պաշտպանելու  
խնդրում, դիտակալները հանդիսանում են բջիջների գլխավոր հե-  
նարանները, հետեւալես մոլախստերի գետ տարվող արշավումն ել  
դիտակալները պետք է կուրեորագույն ողակ հանդիսանան:

Մինչև այժմ բարձր բերքի դիտակալների աշխատանքին ելու-  
թյունն եր՝ պաշտպանել բերքը կորուստներից ու հափշտակում-  
ներից: Պայքարել ազգությանիկայի համար: Անա, հենց այս յեր-  
կըորդ խնդիրն ամբողջովին պետք է իրագործվի հակառակախո-  
տային արշավի լողունգի տակ:

Ինչպես պիտի աշխատեն հակամոյախոտային արշավին լծած  
բարձր բերքի դիտակալները:

Բջիջի ծրագրի հիման վրա դիտակալները կտպում են արտադրության մեջ, բրիգադայում ու ողակում տարվելիք գործնական աշխատանքների ծրագիրը:

Ցուրաքանչյուր զիտող պետք և ունենայ յուր աշխատանքի ծրագիրը, պետք և իմանա, թե ամեն մի բրիգադայում յմբը և ի՞նչ աշխատանք պետք և կատարվի: Ցուրաքանչյուր դիտող նախ և առաջ իր աշխատանքի բարձր վորակով որինակ պիսաբ ծառացի մյուսներին, նա պետք և դաշտը մոլախոտերից մաքրելու, վարի, կուրտիվացիայի և այլ աշխատանքներում լինի վորակի հարգածային, չպակասեցնելով նաև աշխատանքի քանակը և պետք ամեն կերպ աշխատի, վոր ամբողջ բրիգադան ել այդպես աշխատի:

Դիտողը պատասխանուու յի վնչ միայն իր, այլ և ամբողջ բրիգադի աշխատանքի համար: Նա բրիգադում ակտիվություն պայքարում ե թերությունների, սաղր վարի, վատ քաղանի, բերքի կորուստների գեմ, պայքարում և ազրոտեխնիկայի բոլոր խախտութերի գեմ:

Բարձր ընթքի դիտակալների ժողովներում (իսկ այդպիսի ժողովներ պիտի հաճախ հրավիրվեն, առնվազն ամիսը յերկու անդամ) յուրաքանչյուր զիտող հաշիվ և տալիս, թե իր բրիգադում ազրոտեխնիգական կանոններն ինչպես են կիրառվում: Թեթե բրիգադայում զիտողը պայքարել և ազրոտեխնիկայի կանոնների խախտման դեմ, սակայն բրիգադավարն այդ թերություններն ուղղելու համար միջոցներ ձեռք չի առնել, ապա դիտողն այդ հարցը դնում է դիտակալների ժողովում, իսկ յեթե շտաբ միջամտություն և պահանջվում, այդ դեպքում դիտողն այդ մասին հայտնում է կոմյերիտական ընդիշի քարտուղարին, վորն այդ խնդիրը դնում է կոլտնտեսության վարչության առաջ:

Դիտակալների ժողովներում դիտողները կատարում են աշխատանքի փորձի փոխանակություն, հայտարերում են ազրուկանոնների խախտութերը և աշխատում են այդ խախտութերը վերցնելը: Մասսայական բացատրական աշխատանքը նրանք պիտի կատարեն մասնագետների և խմբակների կազմակերպիչների հետ միասին ու նրանց ղեկավագությամբ: Մի քանի շրջաններում դիտակալների հետ միասին կազմակերպվել են նաև գյուղատանտեսության առաջավոր տեխնիկայի տիրապետման՝ համար և անցնելու խմբակներ: Այնուամենայնիվ դիտակալների նպատակն ավելի լայն է (ազրոտեխնիկա և բերքի պաշտպանություն):

Դիտակալները գործնական ագրոտեխնիկայի հետախուզողության են: Նրանք իրենց արդարացրել են, վորպես բերքատվության փրամական մասսայական կազմակերպության ճկուն մի ձև Անցյալ տարի, շատ շրջանների բամբակի ու ծխախոտի դաշտերում դիտակալների աշխատանքի չնորհիվ յերկրի համար ահապէն քանակությամբ հումույթ և պահպանվել՝ սակայն ագրոտեխնիկայի արժանապահությանը գերազանցություն տալիս է:

Ներկայիս հիմնական խնդիրն այն է, վորպեսզի դիտակալներին բարձրացնել հեղափոխական մարտնչող ագրոտեխնիկայի բարձունքներին:

Կուռակացական ու կոմյերիտական կազմակերպությունների և մանավանդ մասնագետների պատշաճ ղեկավարությամբ և ոգոնությամբ դիտակալներն այդ պատվովոր կուլտուր-քաղաքական խնդիրը հեշտությամբ կլուծեն:

Դրա համար եկ զիրաակալներն առաջին հերթին պետք ե տիրապետն աելիսնիկային:

Եերդումներով ու վավերացումներով բերքը չես բարձրացնի: Բարձր բերքն սահացվում ե վոչ թե վառահեղ ֆրազներով, այլ յերկրագործությունը կուլտուրականորեն վարելով: Դեպի բարձր բերքը տանող ուղին գնում ե սաքուր ու լավ մշակված դաշտերի պարարտացման, ճիշտ ցանքաշրջանառության կամ կարճ ասած՝ ազգութեանիկայի միջով: Կոմյերիտմիությունը և գյուղի աշխատավոր յերիտասարդությունը պետք ե տիրապետն ազգութեանիկային: Բարձր բերքի դիտակալը պետք ե ազրուեխուսուցման հարվածային լինի:

Յերիտասարդության ագրոտեխնիկան խըմբը ակադեմիական կազմակերպություններ, խորհանութեանսություններում, ՄՏԿ-ների ազգո-հողամասներում, գյուղիունություններին կից և գյուղերում:

Նրանք պիտի լայն մասսայական կազմակերպություններ լինեն:

Ագրոտեխնիքական աշխատանքների մեջ բարձր բերքի դիտակալները չպետք ե նեղ շրջանակներում պարփակվեն, ընդհակառակը, յուրաքանչյուր դիտող պետք ե աշխատի, վոր իր ըրիգադայի անդամները ևս տիրապետեն ազգութեանիկային:

Մասնագետները՝ կոմյերիտական բջիջի հետ միասին, կազմում են խմբակների պարագաներությունների ծրագիրը: Մոլախոտների դեմ տարվող արշավը վոչ միայն պետք ե կապված լինի խմբակի

ծրագրի հետ, այլ այն պետք եւ կազմի այդ ծրագրի բովանդակությունը Այն պետք եւ կառուցել այնպես, վոր խմբակի յուրաքանչյուր անդամի համար պարզ լինի, վոր հակամութախոտային արշավը—արշավ է ծավալուն աղբատեինիկայի համար, Ծրագրի մեջ պետք եւ մտցնել տեղական գլխավոր մուտքոտերի ուսումնակրությունը և նրանց գել պայքարի միջոցները: Ազրոտեխնուսուցմոն ամենալավագույն ժամանակը ձմեռն է, սակայն խմբակները և մասնագետները պետք եւ ուղարկործեն նաև գորնան ու ամռան ամիսները՝ բացատրական աշխատանքներ ու դնկուցումներ տալու համար և ամեն միջոց գործ դնեն՝ բարձրացնելու յերիտասարգության աղբաղատրաստականությունը:

Գորիի ՄՏԿ-ի քարեամնի պետք տեղակալը (Կոմյերիտմիության գծով) Կարակետի ազրոնողամասում կազմակերպել եւ տրակտորիսանների դաշտային ազրոտեխնագետներ, վորտեղ նախ քան աշխատանք սկսելը և ընդմիջումների ժամանակ՝ դանազան կոտրվածքների ու դադարների որինակի վրա՝ խորապես ուսումնասիրում են տրակտորի աշխատանքը: Աշխատանքի այս ձևը կարելի յեւ կիրառել նաև կողտնտեսության բրիգադաներում: Որինակ՝ ազրոտեխնիկը հայտնարերել եւ վարի թերություն: Նա հենց այս տեղ ել այդ փաստն ոգտագործում եւ վարի վորակի նշանակությունը բացատրելու համար:

Խմբակներն իրենց աշխատանքը պետք եւ այնպես կազմակերպն, վոր նրանց ուսուցումն արտադրության մեջ գործնական արդյունք առ, վոր խմբակի յուրաքանչյուր անդամ դառնա աշխատանքը վորակի իսկական հարվածային:

Ցերիտասարդ գուռ թյան գյուռ դան ակայանն երը: — (հանրապետական և շրջանային), հակամուախոտային արշավի կապակցությամբ, պետք եւ վերակառուցեն իրենց աշխատանքները:

Յուրաքանչյուր զյուզտնտկայան աղբոտեխնիքական կոնկրետ պարտավորությունների նշումով պիտի ունենա այդ արշավին մասնակցելու իր ճարգիրը:

Կայանները կոմյերիտմիության կողմից ազրոտեխնիկայի համար տարվող պայքարի կազմակերպիչն ու զեկավարը պետք եւ լինեն: Նրանք պետք եւ գլխավորեն քիչների, դիտակալների ու խմբակների կողմից բարձր բերքի համար մզվող պատքարի բոլոր աշխատանքները:

Յուրաքանչյուր կայան հակամուախոտային արշավի ցուցադրական աշխատանքների համար պետք եւ առանձնացնի մեկ կամ մի քանի կողտնտեսություն:

Յըրիտասաբզության գյուղանակայաններն իրենց աշխատանքները պետք են հավերժացնեն զնչ միայն աղիտացնայով, այլ և աղբոտեինիկան խախտողների գնմ ակախվորեն պայքարելով: Արքնակ՝ Սալյանի յերիտասաբրդության զյուղանուկայանը Աշաղասուբրտիի աղբոհողամասում կազմակերպել են վարի վորակի մասսայական սուռուցում և այսուղ հայանարերել են վեասարարական—սապը և և վատ վորակի վար, այդ խնդիրը նա դրել են կուաշընկոմի առաջ և հետեանքը յեղել են այն, վոր ստիպել են այդ վատ վարոծ հոգամասերը յերկրորդ անդամ վարել:

Մյուս բոլոր կայաններն ել պետք են այդպիս համապերեն սպայքարեն աղբոտեին մինիմումի կիրասաման համար՝ պյուղատանական ամական ամբողջ տարվա ընթացքում:

Մասնագետները կոչված են ամսելու արշավի: աղիտաստորների պատվավոր գերը:

Գյուղի սոցիալխոստական վերակառուցումը աղբոտեինիկայի անձնազո՞ն մարտիկներ շատ են ծներ:

Զնայած դրան, ինչպես վերջերս նշեց Միության հողժողկումը—մասնագետանները, ինչպես և հողբաժինները, նույն էրիտամիության հակամոլախոտային արշավին շատ թույլ մասնակցություն են ցույց տալիս:

Մասնագետաններից վոմանք այդ հանգամանքը պատճառարանում են իրենց ծանրաբնունվածությամբ, ստկայն միթե դա արդարացուցիչ պատճառարանություն եւ ի՞նչը կարող են ամելի ոգուտ տալ արտադրությանը, քան մասսանների կազմակերպումը—պայքարելու աշխատանքի վորակի, աղբոտեինիկայի համար: Հենց ՄՏԿ-ի աղբոհողամասի աղբոնոմն ամելի լավ կարող են կատարել իր առաջ դրված ինդիքները, յեթե նա մասսաններին դեպի պյուղատնտեսական աշխատանքների վորակն ու տեմովը տանի:

Վճչ մի մասնագետ, մանավանդ յերիտասարդ, կոոյի ըրիտական կան ու կուսակցական մասնագետ, չափատք և հեռու մնա հակամուախոտային արշավից:

Ոգնելով բարձր բերքի դիտակալներին, պարապելով աղբուտեին խմբակի հետ, պայքարելով աղբոկանոնների խիստ կիրասաման համար, մասմազետը պետք են լինի հակամոլախոտային արշավի առաջավոր կաղմուկերպիչը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

|  |   |
|--|---|
| Հեղինակի առաջաբանը . . . . .   | 3 |
| Յերկու խոսք թարգմանչից . . . . .   | 5 |
| Յա. Ա. Յակովիկի նամակը . . . . .   | 7 |
| Մաքսիմ Գորկու նամակը հակածոյտակոտային արշավի<br>հարլամայնութեն . . . . . | 7 |

**I. ՀԱՆՈՒՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐԱ-  
ԴՈՐՄՈՒԹՅԱՆ, ՀԱՆՈՒՆ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ՎԼՉՆՉԱՑՄԱՆ . 9**

**II. ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ, ԲԱԶՄԱՆՈՒՄ  
ՈՒ ՎՆԱՍՈՒՄ**

|  |    |
|--|----|
| 1. Վայրի բույների տհուելի պաղավնառությունը . . . . . | 14 |
| 2. Ինչպես են ապրանդվում մոլախոտերը . . . . .         | 15 |
| 3. Մոլախոտերի վնամների բազմապիսությունը . . . . .    | 16 |

**III. ԱԴՐՈՏԵԽՆԻԿԱՑՈՎ ԻՓԵԼ ՄՈԼԱԽՈՏԵՐԻՆ**

Յերկու խնդիր—կանխել և վաշնչացնել . . . . . 18

**Ա. ԿԱՆԽԵԼ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԾ**

|   |    |
|---|----|
| 1. Ցանել միայն առողջ և զտված սերմ . . . . .       | 19 |
| 2. Համառ կերպով հողը մաքրել մոլախոտերից . . . . . | 20 |
| 3. Վաղ ցանքը կատարել իր ժամանակին . . . . .       | 21 |
| 4. Դաշտ պետք ե տանել միայն քայքարված գոմաղը .     | 22 |
| 5. Հերկել միջնակները . . . . .                    | 22 |

**Բ. ՄՈԼԱԽՈՏԵՐԸ ՎԼՉՆՉԱՑՆԵԼ ՎԼՉ ՄԻԱՅՆ ՀՈՒՂՈՒՐԱԳՈՎ,  
ԱՅԼԵՎ ԳՈՒԹԱՆՈՎ, ԿՈՒՔԻՎԱՏՈՐՈՎ, ԱՅՐԵԼՈՎ,  
ԶՐՈՎ, ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՄՐ**

|   |    |
|---|----|
| 1. Կրակը մոլախոտերի գեմ պայքարի փրսնառում . . . . . | 23 |
| 2. Թաղնանել իր ժամանակին և խնամքով . . . . .        | 25 |
| 3. Ցանքաշրջանառությամբ խփել մոլախոտերին . . . . .   | 27 |
| 4. Քիմիան՝ դաշտերի կանաչ վնասառուների գեմ . . . . . | 28 |


Ծ. Սեպը՝ սեպով դուրս տանել—մոլախոտերը պարա-  
պիտներով վոչնչացնել . . . . . 29

#### IV. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԻՐ ԹՇՆԱՄՈՒՆ

- Բամբակի դաշտերի մոլախոտերը . . . . . 30
- Ծխախոտի, թեյի և տեխնիկական այլ կուլտուրաների  
մոլախոտերը . . . . . 33
- Հացահամիկային և բանջարանոցային կուլտուրա-  
ների մոլախոտերը . . . . . 35
- Աղատվենք «Ներմուծվող» մոլախոտերից . . . . . 39

#### ԳԵՊԻ ԱՐԺԱՎԻ ԱՎԱՆԴԱՐԴ

Բարձր բերքի դիտակալներ՝ յերիտասարդություն,  
զյուղանոտ. կայաններ, մասնագետներ, ազրոտեկ-  
խմբակներ, մամուլ . . . . . 40



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0002003

ԳՐԱՑ 65 ԿԵՊ.

A II  
24344

074.



Редакция газ. „МОЛОДОЙ РАБОЧИЙ“  
Орган ЛКСМ Эакрайкома

А. Камаринский

## Уничтожим зеленых вредителей

Сельхозгиз

1934

Эривань